

# Մայիսեան իրադարձութիւններ

1918 թականի մայիսի 28... Վեց դարերի խաւարի վրայ յառնում էր Եռագոյնը՝ խորհրդանշելով Հայկական պետականութեան վերածնունդը:

Իսկ մինչ այդ տեղի էին ունեցել Մայիսեան պատմական ճակատամարտերը (Մայիսի 21-26ին Մարդարապատի, 25-28ին Ղարաքիլիսայի, 23-29ին Բաշ Ապարանի հերոսամարտերը), եւ վերջնական բնաջրնջման եզրին կանգնած հայութիւնը ոչ միայն հերոսաբար դիմադրել էր, այլեւ շանթող իր բազուկն էր իջեցրել ասկեարի գլխին՝ նրան մատնելով փախուստի:

Հայ զէնքը ցնծում էր... Թուրքերն առաջարկում էին հաշտութիւն:

Բայց հայոց զէնքի փառքը խամրում է Բաթումի դիւանագիտական սեղանների վրայ. թէև Հայաստանում զօրքը պահանջում էր մերժել հաշտութիւնը, եւ ժողովուրդն էլ կողմ էր կռիւի շարունակելուն, Թիֆլիսի հայ քաղաքագէտներից բաղկացած պատուիրակութիւնը, որ ղեկավարում էր Կովկասի մայրաքաղաքում նստած Հայ Ազգային Խորհրդի կողմից, անտեղեակ ռազմաճակատի կացութեանը, իր յաղթանակած սիւնի փոխարէն, թշնամու ողորմութեամբ էր գծում Հայոց պետութեան սահմանները, եւ հաշտագիրն ստորագրելուց յետոյ միայն, Վեհիք փաշայից իմանում, որ հայկական զօրքը կռել է հերոսաբար եւ յաղթել թշնամուն:

... Անկախութիւնը հռչակած էր, բայց դեռ մի ամսից աւելի էլ պէտք էր, որ Հայաստանի անդրանիկ կառավարութիւնն ու Հայ Ազգային Խորհուրդը բարեհաճէին Թիֆլիսից ժամանել Երեւան: Անկախ ամէն ինչից, աստիճանաբար ձեւաւորում էր պետական կեանքը:

Հայկական նորաստեղծ պետութեան դիմաց ծառանում էին բազմաթիւ դժարութիւններ՝ ստեղծել ամէն ինչ սկզբից, քանի հարիւր հազար հայ զաղթականներ, համատարած հիւանդութիւններ, ժողովրդական լայն խաւերի անգրագիտութիւն, սով... Եւ բնական էր, որ այդ բոլորին յաղթահարելը դիւրին եւ կարճատեւ չէր կարող լինել:

Հայաստանի առաջին Հանրապետութեան ամենացայտուն նշանակութիւնը կայանում էր նրանում, որ հազեցում տուեց հինաւորց եւ ազնիւ ժողովրդի դարաւոր իղձերին: Շուրջ 6 դար շարունակ Հայ ժողովուրդը անընդհատ մտածել էր եւ ուղիներ էր փնտրել իր կորած անկախութեանը վերականգնելու համար: Վտանգաւոր է եղել, թէ սխալաշատ այդ ճանապարհը, դա կարելու չէ: Կարելուրն այն է, որ նա միշտ ձգտել է դրան, թէ՛ մայր հողի վրայ, եւ թէ՛ օտար ափերում եւ վերջապէս ճաշակել անկախութեան քաղցրութիւնը:

Սակայն Հայաստանի առաջին Հանրապետութիւնը 2.5 տարի աւել չապրեց, նրան փոխարինեց երկրորդը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնը, որը իր 70-ամեայ գոյութեան ընթացքում արմատապէս զարկ տուեց մեր ժողովրդի տնտեսական, հասարակական, մշակութային, գիտական կեանքին եւ հայ ժողովրդին դասեց քաղաքակիրթ ժողովուրդների շարքին: Տեղի ունեցաւ ազգային մեծ Չարթօնը՝ ազգային Վերածընունդ, այն ինչ հնարաւոր չէրաւ ստեղծել 1918-1920 թթ., մեծ մասամբ իրազործեց այդ 70 տարիների ընթացքում:

Եւ ահա եկաւ 1991 թականի սեպտեմբերի 21-ը, ստեղծեց երրորդը՝ անկախ Հայաստանի Հանրապետութիւնը: Նախկին ժամանակաշրջաններում անհրճար անելիքներից կատարւեցին մի քանիսը՝ ամենագլխաւորը հայոց Արցախի ազատագրումն էր բարբարոս եւ շինծու մի հրէշային պետութեան ճիրաններից: Հայ ժողովրդի իղձերից մէկն էլ իրականացաւ. յոյսով ապագայում նաեւ միւս-ները...

Այսպիսով, Հայ ժողովուրդը երկար ու դժարին ճամփայ անցնելուց յետոյ, հասել է իր դարաւոր իղձերին, սակայն սրանով նրա անելիքները չեն աւարտում, նա էլ աւելին կարիք ունի ուժեղ ազգային միասնականութեանը, տնտեսական, գիտական եւ մշակութային մեծ նւաճումների, այն ինչ պատշաճ է մեր հնագոյն եւ ճոխ քաղաքակրթութեան: ■



## Սարդարապատի ձակատամարտ

Ե. Սարգսեան

1918. տեղի է ունեցել մայիսի 21-29-ին, հայկական կանոնադր զորամասերի, աշխարհագորի եւ Արլ. Հայաստան ներխուժած թուրք. զորաբանակի միջեւ Սարդարապատ կայարանի շրջակայքում: Ռուսաստանում 1917-ի Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ ռուս. զորքերը հետ քաշուցին Արմ. Հայաստանից՝ մերկացնելով Կովկասեան ճակատը: Օգտուելով դրանից՝ թուրք. կառավարութիւնը ծրագրեց ոչ միայն վերագաւթել Արմ. Հայաստանը, այլև նաև Արլ. Հայաստանն ու ամբողջ Անդրկովկասը: Խախտելով *Անդրկովկասեան կոմիսարիատի* հետ կնքած (1917-ի դեկտ. 5) *Երզնկայի զինադադարը*՝ թուրք. զորքերը 1918-ի փետր. 10-ին անգամ յարձակման եւ շնորհիւ գերակշիռ ուժերի վերանաճեցին Երզնկան, Կարինը, Սարիղամիշը, Կարսը, Մայիսի 15-ին գրաւեցին Ալեքսանդրապոլը: Կովկասեան ճակատում գործող Հայկ. կորպուսը [հրամանատար՝ գեմ. Նազարբեկով (Նազարբեկեան)], որը կազմած էր 3 դիւիզիայից (հրամանատարներ՝ գեմ. Արեշեան, գեմ. Մովսէս Միլիկով, գեմ. Անդրանիկ Օզանեան), մարտերով յետ քաշեց՝ ապահովելով նաև տասնեակ հազարաւոր արեւմտահայ գաղթականների անվտանգութիւնը:

Ալեքսանդրապոլը գրաւելուց յետոյ թուրք. մի զորաբանակ արշաւեց դէպի Լարաբիլիսա (տես *Լարաբիլիսայի ճակատամարտ* 1918), միւսը Եաղուր Ծեքի փաշայի գլխաւորութեամբ մայիսի 21-ին յարձակեց Սարդարապատի ուղղութեամբ՝ Երեւան ներխուժելու նպատակով: Թուրք այդ զորախմբի կազմում էին 36-րդ հետեւակային դիւիզիան, հարուծային եւ սակրատրների մէկական գումարտակներ, հեծեալ զունդ, 1500 քուրդ հեծեալներ, հրետանային մարտկոց (40 հրանօթ): Սարդարապատի պաշտպանութեանն իրականացնելու պարտականութիւնը դրեց գեմ. Մ. Միլիկովի վրայ, որի զորախմբի կազմում էին 2-րդ հրաձգային դիւիզիան (առանց 7-րդ եւ 8-րդ գնդերի), 3-րդ հետեւակային բրիգադը (Վանի 1-ին եւ 2-րդ գնդերը, Մակուի հետեւակային գումարտակը) եւ 2-րդ հեծեալ բրիգադի 1-ին զունդը: Հայկ. այդ զորախմբի հիմն. ուժերը (հրամանատար՝ գնդ. Դանիէլ բէկ *Փիրումեան*) կենտրոնացեցին Սարդարապատի ուղղութեամբ յարձակող թուրք զորախմբի դէմ, իսկ 6-րդ հրաձգային, 2-րդ հեծեալ եւ պարտիզանական հեծեալ գնդերը սահմանապահ գումարտակի աջակցութեամբ փակելու էին Բաշ Ապարանից Երեւան շարժող թուրք. 9-րդ դիւիզիայի ճանապարհը (տես *Բաշ Ապարանի ճակատամարտ* 1918): Թիկունքը եւ Երեւանի պաշտպանութիւնը հմտօրէն ղեկավարել է Արամ Մանուկեանը:

Յարձակող թուրք. զորախմբը մայիսի 21-ին գրաւեց Սարդարապատ կայարանը, համաճում գիւղը (այժմ՝ Արմաւիրի շրջ. գ. Հոկտեմբեր) եւ Գեչլու (այժմ՝ գ.

Մրգաշատ): Մայիսի 22-ին հայկ. 5-րդ հրաձգային զունդը (հրամանատար՝ գնդ. Պօղոս բէկ *Փիրումեան*), պարտիզանական հետեւակային զունդը, Իգդիրի հետեւակային զունդը եւ յատուկ հեծեալ զունդը Քեօրփալուից (այժմ՝ Էջմիածնի շրջ. գ. Արշալոյս) եւ Դուրդուղուից (այժմ՝ Արմաւիրի շրջ. գ. Արմաւիր) անցան յարձակման, կտրեցին թուրքերի դիմադրութիւնը եւ նրանց հարկադրեցին խոնձապահար յետ փախչել շուրջ 15-20 կմ: Մակայն, օգտուելով այն բանից, որ հայկ. ուժերը դադարեցրին հետապնդումը, թուրքերը վերադասաւորեցին ուժերը, անբացան Արաքս կայարանից հս-արմ. գտնող Չիմնի եւ Թուրք. հրամանատարութիւնը որոշեց համալրել Եաղուր Ծեքի փաշայի զորքը (մայիսի 22-26-ի մարտերի ընթացքում թուրքերը տուցին 3500 սպանւած), սակայն հայերը յետ շարժեցին օգնութեան եկող Միւրսեւ փաշայի 5-րդ դիւիզիան: Հայկ. հրամանատարութիւնը մշակեց թուրքերին վճռական հարւած հասցնելու եւ ջախջախելու ծրագիր: Ստեղծեց հարուծային զորախումբ [գնդ. Կ. Հասանփաշայեանի (Դասաբփաշեան) հրամանատարութեամբ, զորախմբի կազմում էին Երզնկայի հետեւակային զունդը, Մակուի առանձին գումարտակը, երկու էսկադրոն, Խնուսի գնդի մէկ վաշտ եւ 4 հրանօթ], որոնք Պանդուխտի (Միքայէլ Մէրեան) գլխաւորած մշեցիների ջոկատի հետ շրջանցելով թուրքերին, մայիսի 27-ին հարուծեցին նրանց թիկունքից, միաժամանակ հայկ. հիմն. ուժերը հարուծեցին ճակատից: Ծանր կորուստներ կրելով՝ թուրք. զորաբանակի մնացորդները խոնձապահար փախան Ալեքսանդրապոլ: Գնդապետարտն ասարտեց թուրք. գերակշիռ ուժերի դէմ տարած լիակատար յաղթանակով:



Ս. ճ-ում յաղթանակը նաճեց հայ հրամանատարների հմուտ ղեկավարութեամբ գործող հայկ. կանոնադր զորամասերի եւ աշխարհագորայինների հերոսական պայքարի գնով: Ս. ճ-ում լաւագոյնս դրսեւորեցին հմուց եկող հայկ. ռազմ. արեստի աւանդոյթները: Գնդապետարտն մասնակցեցին հայ ժողովրդի բոլոր խաւերի ներկայացուցիչները՝ զիւղացիներ, մտաւորականներ, հոգեւորականներ, արհեստաւորներ, ռուս. բանակում ծառայած հայ սպաներ, քաղ. բոլոր կուսակցութիւնները, մտացուցեցին բոլոր տարածայնութիւնները: Կարեւոր դեր խաղացին հայ կանայք, որոնք սննդամթերք ու ռազմամթերք էին մատակարարում եւ ծառայում իբրեւ գբութեան քոյրեր:

Ս. ճ. հայ ժողովրդի ազատագր. պայքարի փայլուն էջերից է: Ս. ճ-ում տարած յաղթանակի շնորհիւ Արլ. Հայաստանի զգալի մասը փրկեց թուրք. գաւթումից, եւ հնարաւորութիւն ստեղծեց հայկ. պետականութեան վերականգնման համար. 1918-ի մայիսի 28-ին հռչակեց *Հայաստանի Հանրապետութիւնը*:

Ի նշանաւորումն Ս. ճ-ում հայերի տարած յաղթանակի՝ 1968-ին ճակատամարտի վայրում բացել է Ս. ճ-ի յուշահամալիրը:

Ծար. էջ 7-ում

### Իրանահայ Համայնք

**Նժդեհ Յովհաննիսեանը ելոյթ ունեցաւ Հայաստանի հեռուստատեսութեան ծրագրերից մէկում.** Վերջերս մեր ձեռքն հասաւ մի տեսաժապաւէն՝ տեսագրուած Հայաստանի հեռուստատեսութեան մի ծրագրից, որտեղ ծրագրի հաղորդավարը՝ յայտնի ասումնքող Սեւոյանա Խանումեանը ներկայացրեց իրանահայ երիտասարդ ասումնքող, դերասան եւ բանաստեղծ Նժդեհ Յովհաննիսեանին: Հանդիպման թեման իհարկէ պոեզիան էր, սակայն այնտեղ եղան այլազան հարցեր: Նժդեհ Յովհաննիսեանը բացատրութիւններ տրւեց իրանահայ արդի մշակութային կեանքի, Իրանում հրատարակուող հայ մամուլի եւ իրանահայ երիտասարդ բանաստեղծների մասին: Հաղորդավարը բանաստեղծութիւններ արտասանեց Նժդեհ Յովհաննիսեանից եւ Արփի Ալեքսանդրից: Մամուլի մասին խօսելիս Նժդեհ Յովհաննիսեանը կանգ առաւ «Լոյս» երկշաբաթաթերթի վրայ: Նրա կարծիքով «Լոյս»-ը բարձր որակ է ներկայացնում եւ չնայած ընդամենը 1 տարի է անցել թերթի լոյս ընծայումից, արդէն իսկ իրանահայութեան հաւանութեանն է արժանացել այն:

### Իրան

**Օղային վթարի հետեւանքով գոհւել են ԻԻՀ տրանսպորտի նախարարը, նախարարին ուղեկցող ԻԻ խորհրդարանի պատգամատրոնները եւ ինքնաթիռի անձնակազմի հինգ Հայաստանցիներ.** Ցաւօք տեղեկացանք, որ վթարը պատահել է Իրանի «Մարի» Քաղաքի մօտակայքում: Ըստ հաղորդուած լուրերի ԻԻՀ տրանսպորտի նախարար ղկտ. Ռահման Դամանը եւ նրա ուղեկցող պատգամատրոնները Գորգան էին մեկնում քաղաքիս նորակառոյց օդակայանի բացման արարողութեանը մասնակցելու նպատակով: Ըստ տեղեկութիւնների հաւանաբար մառախուղն է վթարի պատճառ դարձել: Հասարակ աղբիւրներից տեղեկացանք, որ այդ նոյն մառախուղի պատճառով ուղղաթիռներին չյաջողեց գտնել վայր ընկած ինքնաթիռը, հետեւաբար պատասխանատուները ստիպուած ըստեղծեցին 1000 հոգուց բաղկացած



բնիկ ժողովրդից կազմուած մի հետազօտող խումբ: Քանի որ օդաչուն եւ միւս անձնակազմը Հայաստանցիներ էին, մայիս 17-ին Հայաստանից իրան ժամանեց մի քննիչ յանձնախումբ:

Մահացածների շարքում են Հայաստանցիներ կապիտան Աշոտ Ամիրբեգեանը, օդաչուի օգնական Արաբհամ Վարդանեանը եւ ինքնաթիռի մեխանիկայի մասնագէտներ՝ Ռուդիկ Յակոբեանը, Համլետ Օհանեանը եւ Սարգիս Գրիգորեանը:

Ընդհանուր զոհածների թիւը 29-ն է: Վթարի բուն պատճառը եւ նրա մանրամասնութիւնները յայտնաբերելու համար հարցը քննարկուում է:

**Ի նտերնետային ազգային «Դէյթա» ցանցը սկսեց աշխատել (Համշահրի օրաթերթ, 17.05.01).** Սոյն ցանցի բացման արարողութեանը, որը գուգադիպել էր «Միջազգային հաղորդակցութեան» օրայ հետ, մասնակցել էին ԻԻՀ խորհրդարանի նախագահ Հոջ. Մ. Քառուրին, համերայեւտութեան հաղորդակցութեան նախարար ղկտ. Ա Մոքամեդին:

Այս նախագիծը հնարաւորութիւն է ստեղծում, Իրանի 180-ից անելի քաղաքների 420 տեղում հաղորդակցութեան սպասարկման: Այս ցանցի հնարաւորութիւնից կարող են օգուել Թեհրանի 1 միլիոն քաղաքացիներ:

**Առաջին անգամը լինելով Իրանի Իսլամական Հանրապետութեան «Ճարհանգ» (մշակոյթ) Ռադիօկայանից ներկայացրեց հայ գրողի քատերգութիւնը.** 2001թ. մայիսի 11-ին վերոյիշեալ ռադիօկայանից ներկայացրեց Հայաստանի վաստակաւոր եւ սիրուած քատերագիր Ժիրայր Անանեանի գրչին պատկանող «Կառուսել» (Ես եմ, եկել եմ) քատերգութիւնը:

Թատերգութիւնը քարգմանել էր իրանահայ հանրածանօթ բեմադրիչ Անդրանիկ Խեչումեանը: Ռադիօթեմադրութիւնը իրականացրել էր հանրայայտ արեստագէտ Մադրեդդին Ըաջարէն:

Ծրագրի սկզբում հաղորդավարը հակիրճ ձեւով հեղինակին ծանօթացրեց ունկնդիրներին: Այնուհետեւ պրն. Ս.Ըաջարէն ելոյթ ունեցաւ եւ իր մասնագիտական տեսակէտն յայտնեց թէ՛ գաւթի եւ թէ՛ նրա քարգմանութեան մասին: Հրաւիրել էր նաեւ քարգմանիչ Անդրանիկ Խեչումեանը: Վերջինս լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդեց ներկայացուցիչ ստեղծագործութեան, նպատակադրոյթների եւ ակնկալիքների վերաբերեալ:

Անուշտ այս ձեռնարկը կը նպաստի երկու՝ իրանական-հայկական ժողովրդների մշակութային յարաբերութիւնների զարգացմանն ու ամրապնդմանը:

### Հայաստան

**Գարուն» ամսագրի 2001թ. Նոր տարւայ համարը յատկացւել էր Իրանին եւ իրանահայերին.** Հայաստանում հրատարակուող վերոյիշեալ ամսագիրը իր 2001թ. Նոր տարւայ համարի էջերը գրեթէ ամբողջութեամբ յատկացրել էր Իրանի մշակոյթին եւ պոեզիային: Այնտեղ հրատարակուել էին Իրանի առաջնորդ Այաթօլլահ Խամենեյի «Միջկրօնական» միջազգային համագումարում ընթերցուած ուղերձը, նախագահ Խաթամիի արտասանած ճառը՝ ՄԱԿ-ի 100-ամեակի զագաթնաժողովում, Հայաստանում Իրանի լիազօր դեսպան Մ. Ֆ. Քոլէյնի խօսքը, Իրանում Հայաստանի լիազօր դեսպան Գ. Ղարիբջանեանի հարցազրոյցը եւ իրանահայ հանրածանօթ բեմադրիչ եւ Իրանից Հայաստան ժամանաց առաջին քատերախմբի (բեմադրական լեզուն՝ պարսկերէն) պատասխանատու Անդրանիկ Խեչումեանի շահաւետ հարցազրոյցը:

Գրական բաժնում լոյս էր տեսել 40 իրանցի գրողների ստեղծագործութիւնները, որոնք քարգմանել էր հանրածանօթ քարգմանիչների կողմից:

Այդ քարգմանիչների շարքում են Համօ Մահեանը, Էդարդ Հախվերդեանը, Դաիթ Յովհաննէտը, Գալուստ Խանենցը, Խաչիկ Խաչերը, Վահէ Արմէնը, Նոր Վանը եւ...:

**Մերժ Սարգսեանը ընդունեց բարոնտի Բոքսին.** Մայիսի 16-

ին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը ընդունել է Մեծ Բրիտանիայի և Հիսպանիան Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոչսի գլխավորած պատվիրակությանը, որին ուղեկցում էր գործընկերակցության Զորի Բալայանը:



**Ռոբերտ Քոչարեանն ընդունեց Քերոլայն Քոչսին (ԱրմՆայրես 15.05.01).** Նախագահ Ռոբերտ Քոչարեանն այսօր ընդունել է Մեծ Բրիտանիայի և Հիսպանիան Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոչսի գլխավորած պատվիրակությանը: Ինչպես յայտնեցին նախագահի մամուլի գրասենյակից, ողջունելով հիւրերին, Ռ. Քոչարեանը նշել է, որ միշտ էլ հաճելի է հանդիպել բարեկամների հետ: Խօսելով Արցախ կատարած իր հեռավար այցի մասին, Ք. Քոչսը տեղեկացրել է, որ Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700-ամեակի առթիվ Բերլինում անցած շաբաթը չափազանց կարևոր էր: Ինչպես նաև մայիսի 9-ին Եւրոպայի Վարչապետությանը անցած շաբաթը չափազանց կարևոր էր: Ինչպես նաև մայիսի 9-ին Եւրոպայի Վարչապետությանը անցած շաբաթը չափազանց կարևոր էր: Ինչպես նաև մայիսի 9-ին Եւրոպայի Վարչապետությանը անցած շաբաթը չափազանց կարևոր էր:

**Վարչապետն ընդունեց պայմանական ազատմամբ Ֆրանսիայից Հայաստան արտաքսում Վարուժան Կարապետեանին (ԱրմՆԱյրես 04.05.01).** Այսօր ՀՀ վարչապետ Անդրանիկ Սարգսյանն ընդունեց քաղաքացիական պայմանական ազատմամբ Ֆրանսիայից Հայաստան արտաքսում Վարուժան Կարապետեանին: Ինչպես յայտնեցին կառավարության տեղեկատվության և հասարակայնու-



թեան հետ կապերի վարչությունից, վարչապետն իր ուրախությունն է յայտնել նրա ազատ արձակման և հայրենիք վերադառնալու կապակցությամբ՝ իբրև կառավարության ղեկավար պատրաստակամություն յայտնելով պետության կողմից հնարավորինս աջակցել նրան՝ Հայաստանում իր հետագայ կեանքն ու գործունեությունը շարունակելու համար: Վարուժան Կարապետեանը, շնորհակալություն յայտնելով վարչապետին ջերմ ընդունելության համար, նշել է, որ այսուհետ հայրենիքում ապրելով, ամբողջությամբ նվիրվելու է Հայաստանի հզորացման և բարգաւաճման խնդրի իրագործմանը՝ ի սպաս դնելով իր բոլոր հնարավորությունները: «Ինձ համար գերագույն նպատակ է իմ հայրենիքի և ոչ երբեք հատուծական ու նեղ կուսակցական շահը հետապնդելն է», - ընդգծել է Վ. Կարապետեանը:

**ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման փաստաթուղթը կը ներկայացուցի ԱԺ-ին և ողջ ժողովրդին (ԱրմՆայրես 16.05.01).** Այսօր ԱԺ կառավարությունը հարցուպատասխանի ժամանակ կրկին խօսեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթի մասին: ԱԺ պատգամավոր Մեսանիկ Մալխասեանը անդրադարձաւ «օկուպացիան» բառին: Վերջինիս նաև հետաքրքրում էր թե ինչպիսի լուծում է սպասում արցախեան հիմնախնդրին, քանի որ շատ է շահարկում նաև Մեղրիի միջանցքի հարցը: Վ. Օսկանյանը յայտնեց, որ երեկ ԱԺ արտաքին յարաբերությունների յանձնաժողովի հրահրած միտքի ընթացքում պատասխանել է բազմաթիվ հարցերի, կրկին անգամ նշելով, որ «օկուպացիան» բառն օգտագործել է «գրադեքորով» իմաստով: Ինչ վերաբերում է ԼՂ-ի հակամարտության կարգավորման մանրամասներին, ապա, ըստ արտգործնախարարի, հրապարակաւ չի կարող խօսել այդ մասին. «մինչև այս փաթեթի բոլոր տարրերը բոլորին յայտնի չլինեն, ինչ էլ ասեն, սխալ է հասկացելու. եկէք սպասեք մինչև ժնեւեան հանդիպում, յուսանք, որ այնտեղ կը ստանանք մի փաստաթուղթ, որի շուրջ նախնական համաձայնություն կը լինի, և այն կը ներկայացնենք ասելի լայն քննարկման: Կարող եմ վստահեց-

նել, որ նման հարցի կարգավորումը պէտք է արժանանայ ԱԺ-ի, եթէ ոչ ողջ ժողովրդի, համաձայնությանը», - ասաց Վ. Օսկանյանը:

**Միջազգային աստղագիտական միության գիտաժողովը՝ Բիւրականում (ԱրմՆայրես 08.05.01).** Յունիսի 18-22-ը ՀՀ ԳԱԱ Բիւրականի աստղագիտարանում տեղի կունենայ Միջազգային Աստղագիտական Միության (ՄԱՄ) գիտաժողովը՝ «Ակտիվ գալակտիկական միջուկների շրջահայտություններ» թեմայով: Գիտաժողովը ներառում է հայ մեծամասն գիտնական ակադեմիկոս Բենիամին Մարգարեանի յիշատակին: Ինչպես ասաց Բիւրականի աստղագիտարանի գիտական քարտուղար, գիտաժողովի կազմակերպիչ նախագահ Արեգ Միքայելեանը, այդպիսի հեղինակատր միջոցառման կազմակերպումը Բիւրականում՝ ակադեմիկոս Մարգարեանի, հայ միւս աստղագետների կողմից այս բնագաւառում ձեռք բերած ակնառու նաճումների վառ վկայությունն է: Բիւրականի աստղագիտարանն ակտիվ գալակտիկաների որոնումների և ուսումնասիրության մէջ առաջատար դիրքեր է գրաւում աշխարհում, ուստի պատահական չէ, որ կազմակերպող միջոցառմանը մասնակցելու ցանկութիւն են յայտնել 22 երկրների 90-ից ատիկ աստղագետներ, որոնց թում մի շարք աշխարհահռչակ գիտնականներ: Գալակտիկաների ակտիվության գաղափարն առաջ է քաշել 20-րդ դարի 50-ական թականներին՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանի կողմից, և այդ շրջանից ակտիվ գալակտիկաների ուսումնասիրությունը դարձել են ժամանակակից աստղաֆիզիկայի կարեւորագոյն բնագաւառը:

### Միջազգային

**Արկաղի Ղուկասեան. «Մեղրին Ղարաբաղի հետ փոխանակելը իրական չէ» (ԱրմՆԱյրես 16.05.01).** Աշխատանքային այցով Ֆրանսիայում գտնուող ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասեանը տեղի մամուլին ասել է, որ բանակցային



ներկայ փուլում դարաբաղեան կողմի մասնակցութիւնը սկզբունքային խնդիր չէ. «Ամենից կարելորդը բանակցութիւնների արդիւնքն է եւ ոչ ֆորմատը»:

**Արմենիկում»-ը զգալիօրէն օգնել է 5 կիսրոսցիներին.**- Կիպրական «Մայփրս ուիքլի» շաբաթաթերթն իր մայիսի 4-10 համարում հաղորդում է, որ ԳԱՎ-ով տառապող հինգ կիպրացի հիւանդներ, որոնք արդէն վեց ամիս է, ինչ բուժման նպատակով Հայաստան են ուղեւորում ժամանակ առ ժամանակ, այժմ «նշմարելիօրէն բարելաւել են իրենց առողջական վիճակը:

**Այնաստ»-ը վաճառում է «Քոռի Նուր» ընկերութեանը (Ազգ օրաթերթ 16.05.01).**- Իրանական «Քոռի Նուր» ընկերութեանը Երեւանի «Այնաստ» ՊՓԲԸ-ի մասնատրեցման շուրջ բանակցութիւնները վերջնական փուլում են: Օրերս կը կնքւի գործարանի հիման վրայ հայ-իրանական համատեղ ձեռնարկութիւն ստեղծելու պայմանագիրը: Գործարանի գործադիր տնօրէն Գուրգէն Բզումունի տաժ տեղեկութեան համապատասխան, իրանական կողմին կը փոխանցւի ՀԶ բաժնետոմսերի 63 տոկոսը, մնացած 37 տոկոսը կը մընայ կողեկութիւն ու մի քանի տասնեակ տեղացի ներդրողների: Պայմանագրով նախատեսուած է առաջիկայ երեք տարիներին գործարանում տեխնոլոգիաների, շրջանառու միջոցների, շինութիւնների տեսքով կատարել 1,5 մլն դոլար ներդրումներ, ինչպէս նաեւ՝ 400 հազար դոլար, որով պէտք է փակւի գործարանի մինչ այժմ կուտակած պարտքերը: Պայմանագրով նախատեսուած է առաջին տարում ստեղծել 150 աշխատատեղ, որը երկրորդ տարում պէտք է հասնի 220-ի, իսկ ներդրումների աւարտից յետոյ՝ 300-ի:

**Հայկական լամպերի առաջին միջինն արտահանեց Իրան.** «Գրանդ սանի» վերագործարկումը շարունակում է (Ազգ օրաթերթ 16.05.01).- Շաբաթ օրը «Գրանդ սանի» լամպերով բեռնաւորած առաջին բեռնատարն ուղեւորեց Իրան: Դրան կը հետեւեն եւս մի քանի մեքենաներ, եւ արտահանող հայկական

լամպերի առաջին 1 մլն խմբաքանակը կամբողջանայ: Հրանտ Վարդանեանը յայտնեց, թէ «Գրանդ սանի» արտադրանքի 90-95 տոկոսը, ըստ նախկին լամպերի գործարանի վերագործարկման քիզնես-ծրագրի, նախատեսուած է միայն արտահանման համար եւ միայն 5 տոկոսը՝ տեղական շուկայի: Իրանին հետեւելու են Ռուսաստանը, Արաբական Էմիրութիւնները, Իրաքը, Քովէյթը եւ այլն:

**Հայաստանը ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովի անդամ (Արմէնպրես 04.05.01).**- Մայիսի 3-ին, Նիւ Եօքքում ՄԱԿ-ի Տնտեսական եւ Սոցիալական խորհրդի նրտաշրջանի ընթացքում կայացած ընտրութիւնների արդիւնքում, Հայաստանի Հանրապետութիւնը ընտրուել է ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովի անդամ: Ըստ ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ յարաբերութիւնների վարչութեան, յիշեալ յանձնաժողովի ընտրութիւններում Արեւելաեւրոպական խմբում առկայ 2 քափուր տեղերի համար, Հայաստանից բացի, իրենց թեկնածութիւնն էին ներկայացրել նաեւ Խորասթիան, Լատուիան եւ Ադրբեյջանը: Ընտրուելու համար անհրաժեշտ էր Տնտեսական եւ սոցիալական խորհրդի անդամ 54 երկրների ձայների պարզ մեծամասնութիւն: Չայները բաշխւել են հետեւեալ կերպ՝ Խորասթիա-38, Հայաստան-30, Լատուիա-24, Ադրբեյջան-14:

**Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի շրջագայութիւնը ԱՄՆ-ում (Արմէնպրես 10.05.2001).**- «Լոս Անջելես քայմ» թերթը անդրադարձել է Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ԱՄՆ այցելութեանը, փաստելով, որ Նորին սուրբ օծութեան ներկայութիւնը փայլ է տալու Հայաստանում քրիստոնէութիւնը պաշտօնական կրօն յայտարարելու 1700-ամեակի՝ Կալիֆոռնիայում շուրջ 800 հազար հայերի տօնակատարութիւններին: Շրջագայութեան ժամանակ Վեհափառ հայրապետը կանգ է առնելու Հիւսիսային Թուրքի կոչող վարչաշրջանի մի փոքրիկ զիւղակում, ուր այլեւս հայեր չեն բնակւում, սակայն ուր այցելել են



նաեւ նախորդ երկու կաթողիկոսները: Այդ իրադարձութեան մասին «Ֆրէնզոյի» օրաթերթը հաղորդում է, թէ բոլոր ձեռնարկների

խտացած ծրագրում ամենայնօրէի երեւոյթը Գարեգին Երկրորդի համար չծրագրուած կանգառն էր:

Շուրջ 100 ազարակազորներ, դադարեցնելով սպորտիւնների ծերատման աշխատանքը, Հիւսիսային Թուրքի վարչակենտրոնի իրենց այգիներում տեղաւորեցին իրարից մի քանի քայլ հեռու, ատօճանապարհի եզրին, ողջունելու համար Հայաստանի եւ հայութեան հոգեւոր առաջնորդին եւ նրան ուղեկցող կառաւարին, որն անցաւ այդ ուղիով, կանգ առնելու Յթեմի սուրբ Մարիամ հայկական եկեղեցում:

**Կայացավ Երեւան-Թարիզ-Երեւան առաջին չեքքը (Արմէնպրես 10.05.01).**- Թարիզի միջազգային օդանաւայանում «Հայկական աւիաուղիների» Եակ-40 ինքնաթիռի վայրէջքով բացեց Երեւան-Թարիզ-Երեւան չեքքը: Այդ առթիւ օդանաւայանում կայացած արարողութեան ժամանակ Իրանի Արեւելեան Ատրպատական նահանգի փոխնահանգապետ Նաջաֆի Օզերը նշեց, որ մանաւանդ վերջին երկու տարիներին ընթացքում նահանգի եւ Հայաստանի միջեւ կապերը սերտացել են, եւ, չնայած ցամաքային ճանապարհով Թարիզ-Երեւան երթուղին տեւում է ընդամենը 9 ժամ, կարելու էր ստեղծել էլ արեւի արագընթաց՝ օդային կապ: ՀՀ ԶԱԳՎ միջազգային կապերի եւ լիցենզաւորման վարչութեան պետ Խաչատուր Կիրակոսեանն ընդգծեց, որ չեքքի բացումը հարեւան ժողովուրդների կապերն ամրապնդելու հեթական քայլն է: Իրանեան կողմը, Խ. Կիրակոսեանի ասելով, ընդունելի է համարել չեքքի գները (մի ուղղութեամբ՝ 80 դոլար, երկու ուղղութեամբ՝ 140-150 դոլար), միաժամանակ արծարծելով դրանց իջեցման հնարավորութեան հարցը: ■



Հայոց ցեղասպանութիւնը



Տեղասպանութիւն երեւոյթի բնորոշումը

Պրոֆեսոր Ի.Ա. Արաբեան

Թուրքիայի ցեղասպանութեան քաղաքականութիւնը պայմանաւորուած էր մի շարք էական գործօններով. առաջինը պանիսլամիզմը եւ պանթիսթիսմըն էր, որի օգնութեամբ օսմանեան իմպերիան թուրք ժողովրդի մտածողութեան մէջ ներարկում էր աստեղութիւն՝ ոչ մուսուլմանական բնակչութեան նկատմամբ, կոչ անելով ոչնչացնել նրանց՝ դրսևտրելով ազգային շովինիզմ: «Հայութիւն» թերթում տպագրուած է Վոլֆգանգ Գուստի «Հայերի ցեղասպանութիւնը՝ աշխարհի հնագոյն քրիստոնէայ ժողովրդի ողբերգութիւնը», խորագիրը կրող լայնածաւալ յօդուածը, որտեղ հեղինակը, ականատեսների վկայութեամբ, մանրամասն նկարագրել է հայերի ցեղասպանութեան մեթոդներն ու եղանակները, որոնք սարսուցնող եւ ցրնցող են, վիշտ ու կարեկցանք, զայրոյթ ու ըմբոստութիւն եւ բողոք են առաջացնում ամեն մի բարեկիրթ ընթերցողի հոգում: Ամենաալանդակ ձեւով բռնաբարուած դեռահաս աղջիկների, կանանց ճակատագիրը, թուրքերի անհազ ընչաքաղցութիւնը, թալանը... «Բռնի մահմեդականացում», «Տառաջիօրէն դժոխքով անցածները», «Բնաջնջման ճամբարներ» ենթավերնագրերով շարադրանքում նկարագրում է, թէ ինչպէս հայերին ստրկացնում էին, վաճառքի հանում կամ մի հայ երեխան ինչպէս էին փոխանակում մի բուռ թութունի հետ, մօտ 100 հազար հայուհիներին, ըստ Ազգերի լիգայի զեկուցագրի, թաքցրել են թուրքական հարեմներում, ստիպել են ամուսնանալ թուրքերի, քրդերի հետ: Թուրքական «բարեսրտութեամբ» 500 մարկ վճարով (կաշառքով) բռնագաղթից աւելի երկար ժամանակով ազատել են քոլէջի հայ ուսուցիչներն ու սաները: Հալէլից հարաւային շրջանում 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 30000 հայ մեռաւ սովից, 2000-ը համաճարակներից: Միայն մէկ շաբաթայ ընթացքում Դեր Էյր Ջորի շրջակայքում սպանել է 60000 հայ, իսկ ընդհանուր առմամբ այնտեղ իրենց մահն են գտել աւելի քան 300 հազար հայ 2: Մեքսիկէի հարթավայրում մօտ 60 հազար հայ արդէն թաղուած էր, ողջ մնացած երեխաների մէջ մոլեգնում էր սարսափելի արիւնալուծը, որովհետեւ ուսում էին խոտ, հող եւ նոյնիսկ արտաթորանք: Տեսել են վրանի մէջ սովամահ եղած 400 երեխաների, տեսել են կանանց, որոնք ձիու թրիքի միջից ջոկում եւ ուսում էին չմարտած գարու հատիկները: Ինչպէս հաստատել է փաստաբան Մահալ Պարթերը, «թուրքերը բոլորքել են խարոյկը եւ թելերն ու ձեռքերը կապած 2000 հայ որբ երեխայի նետել են բոցերի մէջ» 3:

Այլ կրօնի հաւատացեալներին թուրքացնելն էլ, սակայն, ունէր իր բարդութիւնները եւ էժան չէր նստում: Դրա

համար հարկաւոր էր մինչեւ 12 տարեկան երեխա-ներին յանձնել պետութեանը եւ ապա բնակութիւն հաս-տատել այնտեղ, որտեղ իշխանութիւնները ցոյց կը տա-յին: Կանայք նախ պէտք է պատրաստակամութիւն յայտ-նէին դառնալ մահմեդականի կին: Շատ հայ կանայք, ծծկեր երեխաների հետ, Եփրատն ու Տիգրիսն էին նետ-ում կամ այլ ձեւով վերջ տալիս իրենց կեանքին:

Ֆայտգ էլ Դուսէյնը Դիարբեքիքում գտնելու ժամանակ հարցրել է թուրքերին, թէ հայերը երբեւիցէ սպանե՞լ են քաղաքի որեւէ թուրքի կամ քրդի, նրանք պատասխանել են. «Հայերը ոչ ոքի չեն սպանել»: Մակայն նահանգա-պետ Ռաշիդ բէյը, զէնք հաւաքելու պատրուակով ձերբա-կալել եւ բանտ է նետել 700 հարուստ հայերի եւ տեղա-փոխելու պատրուակով բոլորին զետուս խեղդամահ է արել: Հայերի տներից եւ խանութներից բռնագրաւած հարստութեան մի մասը խրացնում էին արիւնարբու աս-տիճանատրները, միւս մասը յանձնում կառավարութեան ստեղծած կոմիտներին, որոնք ամենաչնչին զներով իւ-րացնում էին այդ ապրանքները եւ գումարը յանձնում պետական գանձարան, իսկ կողոպտած դրամը եւ թան-կարժէք իրերը հաւաքում էին ոստիկանապետի Ռաշիդ բէյի մօտ, որը դրանք փոխադրում էր Կոստանդնուպոլիս, «որպէսզի անձամբ յանձնի Թալէաք բէյի»՝ աւազակնե-րից ամենագլխատրին: Ֆայտգ էլ Դուսէյնը արաք հեղի-նակը, գրում էր. «Ռ՞վ է կարող պատկերացնել այն զգա-ցումը, որ ճնշում է ականատեսի սիրտը, երբ նա մտածում է այդ դժբախտ եւ հերոսական ազգի մասին, որը զար-մանք է՝ պատճառել աշխարհին եւ հերոսութեամբ ու փառքով, որը երկն օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգերից ամենակենսունակ եւ առաջատր ազգն էր, իսկ այժմ վեր է ածել անցեալի յիշողութեան: Նրա դպրոցները, որ մի ժամանակ լի էին աշակերտներով, այժմ դատարկ են, ամենաարժէքատր գրքերը խանութ-պաններն օգտագործում են պանիր փաթաթելու հա-մար» 4:

Այսպիսով, հայերի բնաջնջումը իրականացում էր թէ տեղերում, թէ բռնագաղթի ճանապարհներին եւ թէ արքա-րավայրերում, առանձնապէս Դեր Էյր Ջորում ու Ռաս Էլ Այնում: Թուրք ցեղասպանները կազմակերպեցին նաեւ ատրիներ, յոյների եւ արաբների ջարդեր, իսկ աւելի ուշ՝ քրդերի կոտորածներ: Այսինքն՝ այնպէս, ինչպէս ծրա-գրուած էր: Իրականացնելով հայոց ցեղասպանութիւնը 1915-16 թթ. եւ հետագայ տարիներին, թուրքերը հսկայա-կան միութեան, բարոյական եւ հոգեւոր, մշակութային վնաս պատճառեցին հայ ժողովրդին, հազարաւոր կայ-կական արժէքատր ձեռագրերը, որոնք պահպանում էին եկեղեցիներում, հարիւրաւոր ճարտարագիտական մեծ արժէք ունեցող պատմական յուշարձաններ, մշակութա-յին արժէքներ ոչնչացւել կամ խրացւել են նրանց կողմից: ■

Ճար. 3

1 Տես «Հայութիւն», 1994. ապրիլ, թիւ 5(40):  
2 Տես «Հայութիւն», 1994. ապրիլի 5:  
3 Նոյն տեղում

4 Աղայեան Ծ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից, էջ 480-481

### Ադիեամանցի Քարաջեան Մարիամի պատմածը (ծնւ. 1903 թ.)



Ես պզտիկ էի, երբ ջարդը սկսաւ: Ամէնէն առաջ հայերուն զէնքերը հաւաքեցին, ջահէլներուն թուրքական բանակ դրկեցին, հոն ալ սպանեցին: Քեռիս Թալէաթի քեթիրը՝ գրագիրն էր, իրենց մարդն էր, բայց քանի որ իրենց գաղտնիքները գիտէր, իրեն ալ չխնայեցին, տարին սպանեցին: Մամաս պապիս հետ գը-նացին, որ քեռուս դիակը զոնէ բերեն թաղեն, բայց երբ պապս կը տեսնայ իր զաւակը

սպան-ւած, տեղն ու տեղը կաթած կը խփէ, կը մեռնի: Թուրք զինուորները կը տեսնան, կը սկսին խնդալ.- Ես ի՛նչ լաւ բան եղաւ, մի գնդակ խնայեցինք,- կըսեն:

Մամաս եղբոր ու հօր դիակները հոն փռած կը ձգէ, հագի կը փախի: Մամաս տուն էկաւ լացով, ողբով: Ադ նոյն օրը մեր քարաշէն տունին քովը գնդակ մը պայթեցաւ. հայրս մեռաւ: Տասը տարեկան եղբայրս քովը կըլլայ, ադ տեսնելուն պէս ամբողջ մարմինը վերքեր կը թափէ եւ մէկ օրայ մէջ ան ալ կը մեռնի:

Մնացինք մամաս, երկու տարեկան պզտիկ եղբայրս եւ ես: Մեզի քշեցին, տարին Մթուրիչ: Ո՛չ տուն կայ, ո՛չ հաց, ո՛չ ջուր: Մենք ծարաւ ենք, անօթի: Մարդիկ այնքան սոված էին, որ կը սպասէին ձի կեղտոտի, որ կեղտի միջի գարիները ջոկեն, ուտեն: Եւսն ու կատուն անգամ կուտէին: Կը յիշեմ էջ մը տեսան, խփեցին, էշը սատկեցաւ, վրայ հասան, կտոր-կտոր ըրին հում-հում սկսան ուտել:

Մամաս ստիպւած մեզի ծառի մը տակ դրաւ, ինքը գնաց հաց մուրալու, որ մեզ բերի: Ադ ժամանակ թուրք ժանդարմա մը եկաւ, եղբօրս երեսի վրայ պատկեցուց, վը-րան մեծ քար մը դրաւ, ինքն ալ վրան էլաւ, այնքա՛ն տրորեց, այնքա՛ն տրորեց, որ խեղճ շոջուխին փորը, աղիքները դուրս թափեցան, մեռաւ...

Ադ տեղէն կնիկ մը կանցներ, տեսաւ, մեղքցաւ, երեւի, ըսաւ.- Աս աղջիկին ալ էղպէս պիտի սպանի,- գրկեց ինձ, տարաւ:

Մէկ էլ աչքս բացի, որ սեւ շաղքրի՛ վրանի մը մէջն եմ: Հոն ինձ պահեցին: Քանի որ շատ մը երեխէքի հետ ինձ ալ կրակի մէջ էին նետած, ոտքս այրած էր ու թարախ կուգար: Դեղ դրին: Աղեկցուցին: Ինձի աղէկ պահեցին: Յետոյ երբ ամերիկացիները եկան հայ որբերը հաւաքեցին, ինձ ալ տարին Հայեալի որբանոցը... ■

### Ղարաքիլիսայի ճակատամարտ

1918, տեղի է ունեցել մայիսի 24-28-ին, հայկական եւ թուրքական զօրքերի միջեւ, Ղարաքիլիսայի (այժմ՝ Վանաձոր) մօտ: Ռուսաստանում 1917-ի Հոկտ. յեղափոխութիւնից յետոյ ռուս. զօրքերը հեռացել էին Արմ. Հայաստանի տարածքից եւ գեւ. Թովմաս Նազարբէկովի (Նազարբէկեան) գլխատրած Հայկ. կորպուսը մնացել էր թուրք. զերագանց ուժերի դէմ: Թուրքերը, խախտելով *Անդրկովկասեան կոմիսարիատի* հետ Երզնկայում կընքած 1917-ի դեկտ. 5-ի զինադադարը, 1918-ի սկզբին ներխուժեցին Արմ. Հայաստան, վերանաճեցին Երզնկան, Կարինը, Մարիդամիշը, Կարսը. մայիսի 15-ին գրաւեցին Ալեքսանդրապոլը: Թուրք. զերակշիռ ուժերի ճնշման տակ Հայկ. կորպուսը նահանջեց, նրա հետ արտագաղթեցին նաեւ տասնեակ հազարատոը արեւմտահայեր, որոնց անվտանգութիւնն ապահովում էր *Անդրանիկի* ջոկատը: Ալեքսանդրապոլից թուրք. զօրքերի մի մասը շարժւեց Երեւանի (տես *Մարդարապատի ճակատամարտ* 1918), միւս մասը՝ Ղարաքիլիսայի ուղղութեամբ: Մայիսի 20-ին թուրքերը գրաւեցին Ջաջուռը, Աղբուլաղը, Դալթաղ-չին, մայիսի 21-ին՝ Վորոնցովկան: Չալալօղլիի (այժմ՝ Մտեփանաւան) մօտ, երկօրեայ մարտերից յետոյ (մայիսի 21-22-ին). Անդրանիկի ջոկատը կենտրոնացաւ Գսեղ գ., սպա շարժեց դէպի Դիլիջան: Գեւ. Նազարբէկովի հրամանով 1-ին դիւիզիան (հրամանատար՝ գնդապետ Բէյ-Մամիկոնեան) եւ երկու լեռնային մարտկոցներ քաշեցին դէպի Շահալի, մնացածները կենտրոնացան Դիլիջանի մօտ: Մայիսի 24-ին գրաւեցին Համամլուն (այժմ՝ Սպիտակ): Ղարաքիլիսայի մօտ կենտրոնացած հայկ. զօրքը (հրամանատար՝ Թ. Նազարբէկով) ունէր 6 հզ. զինուոր, 70 հրանօթ եւ մօտ 20 զնդացիր, թուրք. զօրքը (հրամանատար՝ Ջաւադ բէյ)՝ 10 հզ. ասկէար, 70 հրանօթ եւ 40 զնդացիր: Մարտերին մասնակցել են Ղարաքիլիսայի շրջակայ գիւղերի բնակիչները:

Հայկ. ուժերը թուրքերին հիմն. հարածներ հասցրին Դշլաղ գ. մօտ, Բզովկայի մատոյցներում եւ Մայմեխ Լ. լանջերին ու թուրք. զերակշիռ ուժերին հարկադրեցին նահանջել դէպի Համամլուն: Մարտերի ընթացքում հայերը տեղեցին մեծ կորուստներ (շուրջ 2500 մարդ սպանւած, վիրաւոր եւ զերի): Մեծ կորուստներ տեղեցին նաեւ թուրքերը, սակայն. համարում ստանալով, նրանք անցան հակա-յարձակման, եւ հայկ. ուժերը հարկադրւած նահանջեցին Դիլիջան: Ղարաքիլիսայում եւ շրջակայ գիւղերում թուրք ջարդարարները կոտորեցին հայ բնակչութեանը, ատերեցին գիւղերը:

Կովկասում թուրք. զօրքերի հրամանատար Վեհիբ փաշան հետագայում, Բաթումի բանակցութիւնների ժամանակ, խոստովանեց, որ Ղ.ճ «... բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմութեան մէջ: Ղարաքիլիսայի մօտ հայերը ցոյց տեցին, որ նրանք կարող են աշխարհի լաւագոյն զինուորները լինել»: Ղ.ճ-ի, Մարդարապատի եւ Բաշ Ապարանի ճակատամարտերի (1918) շնորհիւ թուրքերը չկարողացան մտնել Երեւան, Արարատեան դաշտ եւ Մեւանի սուազան:

Ղ.ճ-ից յետոյ թուրք. զօրքերը արշաւեցին Դազախ, Գանձակ եւ Բաքու: ■

Շար. 1

## Հասարակական

Այս օրերին իրանահայության հիւրն է պրն. Ռաֆայել Դամբարձունեանը՝ Նախիջեանի Ազգային խորհրդի նախագահ եւ «Ազգային միասնութեան ուխտ» հասարակական-քաղաքական կազմակերպութեան ներկայացուցիչ, «Նախիջեան» թերթի գլխաւոր խմբագիր եւ հիմնադիր: Մեզ բախտ վիճակեց, նրա հետ ունենալ մի կարճ հարցազրոյց :

**-Պրն. Համբարձունեան, նախ կը խնդրենք յայտնել ի՞նչ հանգամանքով էք Իրանում գտնուում:**

-Ես եկել եմ Իրան, հիմնականում, տեղի գաղութին ծանօթանալու համար:

**-Արդեօք որեւէ կազմակերպութեան հիւ՞րն էք:**

-Ոչ:

**-Եթէ կարելի է բացատրէք Նախիջեանի հարցի մասին, ո՞րոնք են Ձեր ու Ազգային խորհրդի մտտեցումները եւ անելիքները այդ հարցի կապակցութեամբ:**

-Մենք ստեղծեցինք սկզբից «Նախիջեանի Հայրենակցական» միութիւնը 1997 թականի վերջերին: Հիմնական նպատակը՝ մշակութային խնդիրներն էինք դրել մեր առաջ, որպէսզի համախմբենք Նախիջեանահայութեանը, բայց նախիջեանահայութեան այդ ժողովը փաստօրէն դարձաւ մեր մտաւորականութեան համախմբումի առիթ, շատ խանդավառութեամբ ընդունեցին «Նախիջեանի Հայրենակցական» միութեան հիմնադրումը: Մենք անմիջապէս առաջին իսկ փաստաթղթով պահանջեցինք իշխանութիւններից՝ չեղեալ յայտարարել 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական բարեկամութեան եւ եղբայրութեան պայմանագրի հիման վրայ կնքուած հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը: Մեզ յաջողեց մեր շուրջ համախըմբել Հայաստանում գործող-այլորդ բոլոր նշանատր նախիջեանահայերին: Ստեղծեցինք նախիջեանահայոց Ազգային խորհուրդը, որը ներկայացուցչական մարմին է՝ փաստօրէն պարլամենտ: Հիմա մեր խնդիրը հետետեւալն է՝ անցեալ տարւայ մտաւորապէս կէսից, մեզ յայտնի դարձաւ, որ Լարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցութիւններում եռանախագահները Հայաստանին ստիպում են՝ միջանցք տրամադրել Ադրբեջանին, որպէսզի վերջինս կարողանայ միանայ Նախիջեանին, քանի որ տէրութիւնները Նախիջեանի հարցն արդէն առաջ էին բերում իրենց այդ պահանջով, մենք պետք է ինքնապաշտպանութեան անցնէինք, հետեւաբար որոշում կայացրեցինք՝ մեր իշխանութիւններից պահանջել՝ նրանք իբրեւ ինքնապաշտպանութեան միջոց անպայման առաջ մղեն մարտի 16-ի պայմանագիրը, 21 թականի հոկտեմբերի 13-ի պայմանագրի չեղեալ յայտարարելու հարցը, որովհետեւ առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու մեր երկիրը յանձնեցին մի երրորդ պետութեանը՝ խնամակալութեան յանգամանքով. յետոյ այդ խնամակալութիւնը գիտէք, որ վերացաւ: Պանթուրքիզմը ուզում է այդ միջանցքը բացել, որպէսզի միանան իրար՝ Թուրքիան ու Ադրբեջանը, այն դէպքում, երբ Տփղեհի պայքարը ամբողջ ուղղւած էր, որպէսզի Չանգեզուրը յանկարծ չկցի Ադրբեջանին եւ նա չմիանայ Թուրքիային: Յատկապէս այստեղ



մեծ դերակատարութիւն ունի Ռուսաստանը, քանի որ Ռուսաստանն է այդ պայմանագիրը կնքել:

**-Իսկ ՀՀ իշխանութիւնները ի՞նչպէս են մտտեցում Ձեր ԱԽ եւ ընդհանուր նախիջեանահայութեան խնդրին :**

-Եթէ իշխանութիւնները մեր առաջարկներին արձագանքէին (իմիջիայլոց այդ առաջարկները ամբողջ հայ մտաւորականութեան առաջարկն էր), մենք անհրաժեշտութիւն չէինք զգայ ստեղծելու՝ նախիջեանահայոց Ազգային խորհուրդ: Փաստօրէն իշխանութիւնները չեզօք դեր ունեն մեր գործունէութեան հանդէպ:

**-Կուզէի խնդրել տեղեկացնել մեզ՝ մինչեւ հիմա Ձեր կազմակերպութիւնը ի՞նչ գործունէութիւն է ունեցել մշակութային կամ քաղաքական առումով:**

-Ես «Ազգային Միասնութեան Ուխտ»ի նախագահն եմ եւ հիմնականում քաղաքական գործունէութեամբ եմ զբաղւում: Մեր մշակութային գործունէութիւնը այսպէս է՝ մենք ամենամեծ նւաճումը համարում ենք այն, որ ստեղծեցինք, «Նախիջեան» թերթը: Պէտք է ասեն, որ մեր ժողովուրդը բաւական օգնում է, որպէսզի կարողանանք այդ թերթը տպագրել: Այդ թերթում մենք բազմաթիւ անվիճելի փաստաթղթեր, լուսանկարներ եւ նիւթեր տպագրեցինք: Մենք կարողացանք նաեւ Գարեգին Նոյեմի արխիւը մեր Ազգային Անվտանգութեան Նախարարութիւնից հանել եւ մտաւորապէս 150 էջ նրա հարցաքննութիւններից տպագրեցինք մեր թերթում, որը հարստացրեց նրա կենսագրականը: Մի խօսքով թէ մեր թերթը կոչւում է «Նախիջեան», բայց փաստօրէն համահայկական թերթ է, որը տպագրւում է երկու ուղղագրութիւններով էլ, որովհետեւ մենք գտնում ենք, ուղղագրութեան խնդրի շուրջ չի կարելի պաշտակուել, մենք առանց դրան էլ քիչ բան չունենք պատակուելու համար:

**-Ի՞նչ յաջողականութեամբ է տպագրւում թերթը:**

-Ամիսը մէկ, տասնվեց էջ, ուզում ենք շարաթաթերթի վերածել:

**-Թրքական շրջանակները բազմիցս փորձել են Նախիջեանի հայկական, մշակութային կոթողները ոչնչացնել, այդ պատճառով հայ ժողովուրդը թէ սփիւղջում եւ թէ հայրենիքում բողոք է ներկայացրել: Այդ կապակցութեամբ՝ բացատրել:**

-Այդ կապակցութեամբ պիտի ասեն, որ երբ մենք նախանցեալ տարի նշում էինք Յակոբ Ջուղայեցի Ըահամիրեանի ստեղծած աշխարհի առաջին սահմանադրութեան 225-ամեակը, գիտաժողով էինք կազմակերպել, գիտաժողովին մասնակցում էր մեր շատ սիրելի հայրենակից, ճարտարապետ՝ Արմէն Հախնազարեանը: Նա գիտաժողովի մասնակիցներին ցոյց տուեց Թեհրանից ստացւած մի փաստաթուղթ, որը ապացուցում էր, որ Ջուղայի խաչքարերը քանդուած, ջարդուած, լցում են վազոններ եւ տանում են (լուսանկարներով): Մենք անմիջապէս հէնց այդ գիտաժողովում մի խիստ բողոքագիր կազմեցինք, եւ Հայաստանի հաստատարմագրւած բոլոր դեսպանատներին ուղարկեցինք, նաեւ «Իւնեսկօ», «ՄԱԿ»: Մեծ աղմուկ բարձրացաւ եւ մենք կարողացանք փաստօրէն կանխել այդ երեւոյթը: Բայց թէ Նախիջեանի խորքերում ի՞նչ է կատարւում, ցաւօք մենք չենք կարող ասել:

**-Արդեօք որեւէ միջազգային դիմում չի՞ կատարւել, որպէսզի հայկական պատմիկական կարողանայ տեղում հետազօտութիւններ կատարի եղածի մասին:**



## Հասարակական

–Մենք այդպիսի մի փաստաթուղթ ուղարկեցինք Ա. Խ. անունից «Ինտելեկտ» եւ Եկեղեցիների Համաշխարհային Համագումարին, բայց առայժմ ցուրտ չենք ստացել որեւէ պատասխան: Կուզենայի մի բան էլ շեշտել, երբ մենք ստեղծեցինք «Նախիջեան» թերթը, այդ թերթի շնորհանդէսը կատարեցինք շատ բարձր մակարդակով եւ լրատրւամիջոցները հաղորդեցին այդ մասին եւ ուղիղ 2 ամիս յետոյ Ադրբեջանի նախագահի յատուկ հովանաւորութեամբ Նախիջեանում սկսեց լոյս տեսնել նոյն անուն տակ տասնապատիկ անգամ գերազանցող մի ամսագիր: Մեր Ա.Խ. անդամ Ռաֆայէլ Ղազարեանի առաջարկով մենք նամակ գրեցինք այդ ամսագրի խմբագրին, որպէսզի համագործակցենք: Նրանք տպագրում է թաթարերէն եւ մերը՝ հայերէն, բայց նոյնն էր, երկուսն էլ Նախիջեանի մշակութային յուշարձաններն են ներկայացնում: Մենք առաջարկեցինք, որպէսզի համագործակցենք, իրենց յօդածները սիրով կը տպագրենք մեզ մօտ, մեր յօդածները թող իրենք տպագրեն: Որեւէ պատասխան չըստացանք:

Լաւ կը լինի, որ մեր ազգային գործիչները իմանան, որ այսօր Նախիջեանի խնդիրը Ղարաբաղեան հակամարտութեան բանակցութիւններում՝ արծարծելը Ղարաբաղի հարցը հայանպաստ ձեւով լուծելու համար կարեւոր է: Մենք ուզում ենք թերթի յաւելած տպագրել անգլերէն, ռուսերէն լեզուներով, որպէսզի ուժեղ պրոպականդա տարի, բայց նիւթական միջոցներ չունենք, որ մեզ օգնեն: Կուզենայի լինեն օժանդակող մարդիկ:

**–Մարտի եւ հոկտեմբերի պայմանագրերի, լուծարման առաջարկների կապակցութեամբ ի՞նչ արձագանքներ եղան:**

–Նախիջեանի Ա.Խ. առաջին անգամը լինելով հայ իրականութեան մէջ, որպէս ներկայացչական մարմին ինքը 1999թ. սեպտեմբերի 11-ին անիրաւագօր եւ ապօրինի ճանաչեց այդ պայմանագիրը: Բոլոր մեր կուսակցութիւնները անխտիր պահանջել են, որպէսզի դա չեղեալ յայտարարի: Հիմա նոյնը մենք պահանջում ենք, որպէսզի կատարի Հայաստանի կառավարութիւնը:

Միջազգային առումով ոչ մի արձագանք, քանի որ Ռուսաստանն է ստորագրել: Մենք Ռուսաստանի պետական Դումային էլ ուղարկեցինք այդպիսի մի փաստաթուղթ եւ առաջարկեցինք, որպէսզի նրանք վերանայեն այդ պայմանագիրը եւ դա համարեցինք հայ-ռուսական յարաբերութիւնների մէջ՝ անկեղծութեան շեշտադրումները ուժեղացնելու մի միջոց: Մենք ուղարկեցինք դա դեսպանատան խողովակով: Մեր այդ ժողովին հրախորել էինք նաեւ դեսպանատան ներկայացուցչին, բայց որեւէ արձագանք չենք ստացել:

Սակայն այս տարւոյ մեր գործողութիւնները բաւական արձագանք ստացան, յատկապէս Ադրբեջանի նախագահի ելոյթից յետոյ: Այս տարի գիտածողով կազմակերպեցինք մարտի 16-ին: Այդ գիտածողովի անունն այսպէս էր. «Ռուս-թուրքական պայմանագիրը՝ որպէս միջազգային իրաւունքի ոտնահարում»: Այդ գիտածողովի եւ յատկապէս Պարոյր Հայրիկեանի կազմակերպած ցոյցի եւ նրա յայտարարութիւնների մասին բաւական արձագանքներ եղան: Ես սա համարում եմ դրական երեւոյթ:

**–Դուք նաեւ պատմաբան էք: Կուզէի պատմականօրէն քննադատել ձեր հայկական ընթացքը, պրոցեսը ի՞նչպէս կատարեց Նախիջեանում:**

–Նախիջեանի այսօրւայ հանրապետութեան սահմանները գծեցին, որոշակիացան 1840-ական թթ.: Ռուսաստանը երբ ստեղծեց հայկական մարզը, այսօրւայ Նախիջեանի տարածքի մեծ մասն ընդգրկեց այդ հայկական մարզի նահանգի մէջ: 19-րդ դարի կեսերին Նախիջեանի ազգագրական-ազգաբաշխական պատկերը մօտաւորապէս հաւասար էր ադրբեջանցիների եւ հայերի միջեւ: Բայց հետագայում 18-20-ը յատկապէս այդ պատերազմների ժամանակ բազմաթիւ հայերի այնտեղից հալածեցին, մասնաւորապէս Գողթանում եւ բուն Նախիջեանում բազմաթիւ կոտորածների հետեւանքով հայերը գնացին եւ շատ-շատերը հեռացան, դրա հետեւանքով ազգագրական-ազգաբաշխական պատկերը յօգուտ ադրբեջանցիների եղաւ:

Այդ գործը էլ աւելի բարձր մակարդակի եւ շատ նեղ ձեւով սկսեցին կատարել, երբ Նախիջեանը ամբողջովին կցեց Ադրբեջանին, քանի որ կոմունիստական իշխանութիւնները, փաստօրէն Ռուսաստանը Ադրբեջանի հետ էր, միասին էին գործում, կարողացան հասնել այն բանին, որ նախիջեանցիները թողնեն հայրենիքը ու գնան: Հիմնականում քանի որ հայերը սիրում են կրթութիւն, յառաջադիմութիւն եւ այլն, նրանք աշխատում էին մեր կրթական օջախները վերացնել այնտեղից: Իրենք քչտր ժողովուրդ են, իրենց համար հեշտ է գիւղերում աճել, շատանալ: Մենք մշակութաստեղծ ժողովուրդ ենք եւ նրանք մըշակոյթի օջախները սկսեցին քանդել, վերացնել: Եւ կամաց-կամաց ամէն ինչ անում էին, որպէսզի հայերը լքեն իրենց ծանրավայրը: Միւս միջոցը, նրանք հովիւ էին բերում հայկական գիւղերը՝ այնտեղ սպրեւելու: Եւ յանկարծ մի 4-5 տարի յետոյ տեսնում էիր այդ գիւղը արդէն դարձել է թէ՛ թրքաբնակ եւ թէ՛ հայաբնակ: Յատուկ քաղաքակառուցութեամբ նրանք կարողացան Նախիջեանը հայաթափ անել: Արցախեան ազատամարտը, որ սկսեց 1988 թ. այդ ժամանակ մօտաւորապէս մի 2 տոկոս հայ կար այնտեղ, մօտ 2000-2500 հոգի: Հիմնականում նրանք կենտրոնացւած էին Գողթան գաւառում, Բիստում, Յընանում, Մեսրոպաւանում եւ այլն, ինչպէս նաեւ Ազնաբերդ հայաբնակ մեծ գիւղում եւ մի քանի ուրիշ գիւղերում:

Դրանք էլ այդ իրադարձութիւնների հետեւանքով ամբողջովին լքեցին հայրենիքը: Մեր վերջին ամբողջ այնտեղ՝ Ազնաբերդ գիւղն էր: Կուզենայի նորից շեշտել, այդ գիւղը ամենաբարձր մակարդակով հերոսաբար մարտնչեց եւ թուրքերին թոյլ չէր տալիս մօտենալ այդ գիւղին: Ազնաբերդ գիւղը շատ մեծ տարածք ունէր: Այդ գիւղը, որ մենք պահէինք, դա կը լինէր խոշոր նաճում մեզ համար: Բայց ռուսական-սովետական բանակը կարողացաւ մտնել այնտեղ եւ վերջնագիր ներկայացրեց գիւղացիներին, որ մենք լրիւ կը փոշիացնենք ձեզ, եթէ չգնաք: Մերոնք ստիպուած դուրս եկան այնտեղից:

**–Պրն. Համբարձումեան կուզէի խնդրել մի քիչ աւելի քննադատել «Նախիջեան» թերթի եւ նրա բաժանորդագրութեան եւ արտերկրեայ ցրման, աշխատակազմի, խմբագրութեան, եւ դժարութիւնների մասին:**

–Դժարութիւնների մասին չեմ ուզում ասել, որովհետեւ բոլորը դա ասում են: «Նախիջեան» թերթը տարածում ունի Աւստրալիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, եւ շուտով Լիբանանում: Կուզենայի նաեւ տարածւել նաեւ Պարսկաստանում: Պարսկաստանում ցուրտ չունենք ոչ մի բաժանորդ: Մենք ստեղծել ենք «Նախի-

## Հասարակական

ջեանի Հայոց Ազգային Խորհրդ»-ի մասնաճիւղ, որը շատ լաւ է գործում Կանադայում՝ Անդրանիկ Պետրոսեանի գլխատնօրէնամբ: Նրանք շատ են մեզ օգնում: Մի քանի համարներ իրենց գումարներով ենք տպագրել:

Թերթը բաւական բարձր մակարդակի է, սփիւռքում եւ Հայաստանում շատ մեծ համարում ունի եւ հետաքրքրութեամբ կարդում են, որովհետեւ մենք չենք սահմանափակում միայն Նախիջեանով: Բայց դժարութիւնն այն է, որ միայն մի հոգի է աշխատում մեզ մօտ, ես ինքս եմ բոլորը կատարում, որովհետեւ եթէ աւելի շատ մարդիկ ուզենանք վերցնել, հասկանալի է չենք կարող տակից դուրս գալ: Ես կոչ եմ անում մեր այստեղի մտաւորականներին, անպայման բաժանորդագրել: Քանի որ առաջին հարցազրոյցն ձեռք եմ տուել, «Լոյս» թերթին սիրով արտօնում եմ, որպէսիս այստեղի մեր ներկայացուցիչն դառնայ:

**-Վերջերս կատարած դիւանագիտական աշխատանքների մասին (Ալիւ-Քոչարեան) ի՞նչ կատէիք:**

-Ամէն կերպ պէտք է մենք խուսափենք օտար թելադրութիւններից, օտար դեղատոմսերից, յատկապէս ամերիկեան: Գորլի ծրագիրը, յայտնի է ժողովրդին իր բուն խնդիրներից շեղելու: Նա մի քարոզչական նպատակ ունէր, որը անընդունելի է: Բացարձակապէս անընդունելի է՝ որեւէ միջանցք տալ, որպէսզի Ադրբեջանը միանայ Նախիջեանին: Այդ միջանցքի համար Գարեգին Նժդեհը կունց 2 տարի բոլշեակների դէմ եւ կործանեց նրանց 11-րդ բանակը թուրքերի հետ միասին, որպէսզի այդ միջանցքը չստացի: Եթէ այդ մենք տուցինք՝ Հայաստանը վերանում է: Ուրեմն սա մենք բացառում ենք, այսպիսի բան մենք չենք կարող անել: Այս վերջին իրադարձութիւնների՝ Ալիւ-Քոչարեան հանդիպման մասին մենք իհարկէ որեւէ տեսակներ չունենք, տեղեակ չենք ինչ է կատարուել եւ այլն: Չիջումներ կարող են լինել, բայց այդ զիջումները չպիտի ազդեն առաջինը՝ Արցախի անվտանգութեանը, երկրորդը՝ հայ ժողովրդի ստրատեգիական-ռազմավարական շահերին:

**-Պրն. Համբարձումեան կուզենայինք բացատրէիք Ձեր անձնական աշխատանքների մասին՝ հայագիտական, պատմական գործերի, ակադեմիայում կատարած աշխատանքների :**

-Քաղաքական եւ ազգային աշխատանքը կլանում է իմ ամբողջ ժամանակը: Ես «Ազգային Միասնութեան Ուխտի» հասարակական-քաղաքական կազմակերպութեան ներկայացուցիչն եմ: Այս տարւայ մեր գործունէութեան ամենակարեւոր կողմը համարում եմ հետեւեալը: «Ազգային միասնութեան ուխտը», Նախիջեանի Ազգային Խորհուրդը դիմում ներկայացրեցին իշխանութիւններին, որպէսզի անպայման նշեն Գարեգին Նժդեհի 115 ամենակը, եւ այդ նշումը ոչ թէ պէտք էր Գարեգին Նժդեհին, այլ մեզ էր պէտք՝ հայ ժողովրդին, որովհետեւ այժմ հայ ժողովրդի հոգեբանական վիճակը ծանր է՝ լքած, յուսահատած: Այսօր այդպիսի մի հզօր շունչ է պէտք, ժողովրդին ոտքի կանգնեցնելու համար եւ այդ իմաստով Գարեգին Նժդեհի ամբողջ ժառանգութիւնը մի Աստուծապարգեւ երեսոյք էր մեր ժողովրդի համար: Մենք իշխանութիւններից պահանջեցինք, որպէսզի կատարեն այդ բանը: Նրանք չկատարեցին: Մենք ստեղծեցինք Գարեգին Նժդեհի 115-ամեակի նշելու յոբելանական-հասարակական համահայկական յանձնախումբը իմ նախաձեռնութեամբ: Այդ յանձնախումբի մէջ մտել են մեր բոլոր նշանաւոր հայ մտաւորականութիւնը: Կարողացանք

սկսել համաշխարհային մակարդակով Գարեգին Նժդեհի 115-ամեակի տօնակատարութիւնը: Մեր իշխանութիւնը եւ արդէն չդիմանալով այդ ճնշմանը՝ ստիպւած եղաւ ստեղծել 115-ամեակի կառավարական յանձնաժողով, որի անդամներից մէկը ես եմ: Ապրիլի 28-ին օպերայի դահլիճում կը լինի երեկոյ, հանդիսատի միատ, որին անպայման ներկայ պիտի լինի Վեհափառ Հայրապետը: Պիտի խնդրենք, որ ներկայ լինի նաեւ նախագահը: Ստեղծել է Գարեգին Նժդեհի հիմնադրամ: Հիմնադրամի նախագահն է «Ազգային Ակադեմիայի» նախագահ Ֆադէյ Սարգսեանը, գործադիր տնօրէնը՝ Ռ. Համբարձումեանը, հիմնադրամի անդամներ՝ Սօս Սարգսեան, Սիլւա Կապուտիկեան, Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան: Շատ կարեւոր է համաժողովրդական նախաձեռնութիւնները եւ ցանկալի կը լինէր, որ մեր իրանահայ հայրենակիցները մասնակցեն այս շատ կարեւոր գործին:

**- Իրանահայ համայնքի հետ ի՞նչքան էք շփուել եւ ի՞նչպէս էք ընկալում, թէ իրանահայութեանը եւ թէ պարսիկ ժողովրդին:**

-Պարսիկը մեր բարեկամ ժողովուրդն է: Եւ առաջին հանրապետութեան ժամանակ մեր կռնակին կանգնած էր միայն Պարսկաստանը: Պարսկական խաները Գարեգին Նժդեհի հետ շատ լաւ յարաբերութեան մէջ էին եւ մեր թիկունքը այդ կողմից գոնէ ապահոված էր, որովհետեւ մենք չորս կողմից կռիւ մէջ էինք: Եւ այս նոր՝ երրորդ հանրապետութեան ժամանակ դարձեալ մեր ամենաօգտակար հարեւանը, պարսիկներն են, որ յատկապէս այն դրժւար տարիներին մենք կարողացանք իրենց հետ կապեր հաստատել եւ ապրանքափոխանակութեան իմաստով մեզ շատ օգտակար հանդիսացան: Շատ յարգելի ժողովուրդ է պարսիկ ժողովուրդը: Մենք ըստ էութեան արիական ազգ ենք՝ երկուսս էլ: Ես բարգաւաճում եմ ցանկանում Իրանի Իսլամական Հանրապետութեանը : Բսկ ինչ վերաբերում է իրանահայ համայնքին, ինձ համար շատ սիրելի է այս համայնքը, որովհետեւ ինքս պարսկահայ եմ, իմ պապերը եկել են Խոյից, 1827-ին գաղթել են այնտեղից Նախիջեան: Եւ շատ բարձր մշակոյթի-կուլտուրայի տէր ժողովուրդ են պարսկահայերը, շատ համեատ են: Հայի համար մէկ բնորոշիչ յատկութիւնը՝ նրա համեստութիւնն է, աշխատասիրութիւնը: Բայց լսել եմ այստեղից էլ են գնում Ամերիկա եւ դա ինձ շատ է մտահոգում:

**-Ձեր տեսակէտը իրանահայ մամուլի, մասնատրապէս «Լոյս» երկչաքաթաթերթի մասին:**

«Ալիք» թերթը եւ միշտ կարդում եմ Երեւանում, բայց Պարսկաստանում եւ կարդացի «Լոյս» թերթը, որի մի քանի համարները կան ակադեմիայի գրադարանում: «Լոյս»-ը շատ լաւ տպատրութիւն թողեց ինձ վրայ: Առաջինը իր բազմազանութեամբ: Միագիծ բան չկայ: «Լոյս»-ը անդուդառնում է բազմաթիւ երեսօթների, ամէն մէկն իր չափի մէջ: Ոչ մի խնդիր, ոչ մի բան այդպէս առանձնացւած չի, դա շատ լաւ է: Այնտեղ եւ՝ մշակոյթներ, եւ՝ պատմութիւններ, եւ՝ մարզական յօդածներ կան: Եւ ուրախ եմ, որ այստեղ մի քանի թերթեր են տպագրում: Տեսայ «Պայման»-ը, որը պարսկալեզու է, եւ դա շատ կարեւոր է, որպէսզի մեր մշակոյթը, պատմութիւնը եւ խնդիրները անպայման հնչեն նաեւ պարսկերէնով: Ես շատ կարեւոր եմ համարում «Պայման»-ի հրատարակութիւնը: ■

Հարցազրոյցը վարեց Էդ. Բաղդասարեանը

Հրատարակութեան խնդրանք  
«Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրութեան

## Հաղորդագրութիւն

Կատարեց Ատրպատականի Հայոց Թեմի Թեմական  
Խորհրդի ընտրութիւնը

Ատրպատականի Հայոց Թեմի Պատգամատրական Ժողովի հինգերորդ հերթական նիստում կատարեց Թեմի Թեմական Խորհրդի ընտրութիւն, որը տեղի ունեցաւ ուրբաթ 11 մայիս 2001թ.-ին Թարիզի Ազգային Առաջնորդարանում: Ժողովին նախագահում էր Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերապատի Հայր Նշան Ծայրագոյն Վարդապետ Թովուզեանը: Մասնակցում էին 11 պատգամատրներ: Բացակայ պատգամատրներից 4-ը իրենց քիչն գրատր լիազօրագրերը յանձնել էին մասնակցող պատգամատրներին: Քւտարկող ժողովականների թիւը 18 էր: Թեմի պատգամատրների ընդհանուր թիւը 19 է:

Ժողովից ընտրւած Յանձնախումբը ժողովականների կողմից առաջարկւած թեկնածուների ցանկը ամբողջացնելուց յետոյ, կատարեց փակ քւտարկութիւն, որի արդիւնքում Թեմական Խորհրդի կազմ ընտրուեցին հետեւեալ կարգով:

- |                          |          |
|--------------------------|----------|
| 1. Պրն. Էմիլ Յակոբեան    | 17 ձայն. |
| 2. Պրն. Էդիկ Գասպարեան   | 17 ձայն. |
| 3. Տիկ. Արմինէ Վահրամեան | 16 ձայն. |
| 4. Պրն. Թադէ Ոսկանեան    | 15 ձայն. |
| 5. Պրն. Սոկրատ Աբգարեան  | 13 ձայն. |

Պատգամատրական Ժողովը, առաջին հերթին, այս ընտրութիւնը գեկուցել է Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, առ ի հաստատում եւ օրհնութիւն: Նոյնպէս՝ Արեւելեան Ատրպատականի Նահանգապետարանին, առ ի հաստատում:

Այսպէս, Պ. Ժ. Դիւանը եւս իր կարգին փոփոխութիւններ կրելով, ստացել է հետեւեալ պատկերը.

- |                  |                         |
|------------------|-------------------------|
| 1. Ա. Ատենապետ՝  | Դոկտ. Սկրտիչ Թումանեան  |
| 2. Բ. Ատենապետ՝  | Պրն. Էդիկ Մէջլումեան    |
| 3. Ա. Ատենադպիր՝ | Դոկտ. Արա Տ. Ստեփանեան. |
| 4. Բ. Ատենադպիր՝ | Տիկ. Մարի Բաղդասարեան.  |

13 Մայիսի 2001 թ. կէսօրին. Երեւանի Ս. Խաչի Տօնի Ս. Պատարագից յետոյ, նորընտիր Թեմական Խորհուրդը Թարիզի Ազգային Առաջնորդարանում գումարեց իր առաջին նիստը, նախագահութեամբ կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Հայր Ծայրագոյն Վարդապետ Թովուզեանի եւ Պատգամատրական Ժողովի Դիւանի ներկայութեամբ: Տէրնական աղօթքից յետոյ, Գերպ. Հայր Սուրբը շնորհատրանքի խօսք ասաց, որից յետոյ կատարեց պաշտօնների քաշխում, բաց քւտարկութեամբ, որի արդիւնքում ընտրուեցին.-

- |                          |             |
|--------------------------|-------------|
| 1. Պրն. Էմիլ Յակոբեան    | ատենապետ    |
| 2. Տիկ. Արմինէ Վահրամեան | ատենադպիր   |
| 3. Պրն. Էդիկ Գասպարեան   | հաշւապահ    |
| 4. Պրն. Սոկրատ Աբգարեան  | խորհրդական  |
| 5. Պրն. Թադէ Ոսկանեան    | խորհրդական. |

Նորընտիր Թեմական Խորհուրդը համաձայն թեմի կանոնագրութեան, ի գօրու է մինչեւ երկու տարի իր ընտրութեան թակահից:

Յարգանքով՝  
Դիւան Ատրպատականի Հայոց Թեմի  
Պատգամատրական Ժողովի  
Ատենապետ՝ Ատենադպիր՝  
Էմիլ Յակոբեան Արմինէ Վահրամեան

## Հայ ուսանողուհու յաջողութիւնը Միացեալ Նահանգներում

Լ. Գ. Միմասեան



Մփիւռքահայ գաղթօջայխներին մէջ, ունենք հայ ուսանողուհիներ, որոնց մէջ կան մեծ թով յառաջադէմներ, որոնցից մէկը Ամերիկայի Միացեալ Նահանգներում ուսանած եւ այնտեղ աշխատող օր. Էլին Պոյաճեանն է:

Նրա ծնողները՝ Տիգրան եւ Կարինէ Պոյաճեաններն են, որոնք 1975թ. Թեքրանից մեկնում են Միացեալ Նահանգներ եւ բնակութիւն հաստատում Լոս Անջելեսում, ուր 1979թ. օգոստոս 21-ին ծնւում է Էլինը, միջանկեալ յիշենք, որ նա Նոր Ջուդայի ազգային վաստակատր, գործիչ հանգուցեալ Սկրտիչ Հայկունեանի թոռան զաւակն է:

Էլինը փոքր հասակից յաճախում է տեղի Ծամկեան տարրական եւ միջնակարգ դպրոցները եւ ւարստում է փայլուն վկայականով: Լինելով հայերէն եւ անգլերէն լեզուների մէջ գերազանցիկ, որտեղ մասնակցում է նաեւ դպրոցի կողմից կազմակերպւած ներկայացումներին:

Միջնակարգն ւարստելուց յետոյ, նրանք ընտանեօք տեղափոխւում են Թեքզաս նահանգը, ուր Էլինը յաճախում է Քափիլ քոլէջը եւ ստանում է դիպլոմ, իսկ յառաջադիմութեան համար 500 դոլար կրթաթոշակ, ապա յաճախում է Ասքին քաղաքի համալսարանը, ուր տարեկան ընդունում են շուրջ 45 հազար ուսանողներ:

Ուշիւն Էլինը ընդունում է տնօրէն լինելու ճիւղում եւ չորս տարւայ դասընթացը ւարստում է երեք տարում եւ արժանանում համալսարանի տնօրինութեան զնահատանքին:

Ներկայիս բնակւում է Դալաս նահանգում, բայց աշխատանքի է անցել Սան-Ֆրանսիսկօ նահանգում, ունի բարձր պաշտօն եւ իր սենեակում երեք հեռախօս, որոնք շարունակ գրադւած են:

Դալասը օդային թռիչքով շուրջ երեք եւ կէս ժամով հեռու է Սան Ֆրանսիսկոյից, բայց նա սիրում է արձակ օրերին միշտ իր ծնողների մօտ լինել, որոնց շատ է սիրում եւ մայրը միշտ ուղեկցում է նրան երթեւեկութեան ժամանակ:

Նրա մասին քանիցս գրել է հայերէն եւ անգլերէն մամուլում, ինչպէս «Ասպարէզ»-ում, «Արնդէյ լայՖ»-ում եւ այլուր:

Վերջերս «Արնդէյ Մագազին»-ը մի բացառիկով տպագրել էր մի քանի ամերիկացի մայրերի եւ նրանց դատրերի կենսագրութիւնները գումարող նկարներով, որոնց մէջ տեղ էր գտել նաեւ Էլինի եւ իր մօր՝ Կարինի գումարող մեծ նկարները, զովասանական տողերով, որը մեծ հպարտութիւն է մեզ համար, որ մի հայ ընտանիք մեծարում է ոչ հայերի կողմից:

Նորանոր յաջողութիւն ենք մաղթում սիրելի Էլինին եւ ցանկանում ւաւել նաճումներ իր գործի ասպարէզում:

Միաժամանակ շնորհատրում ենք նաեւ իր մեծ մօրը՝ տկն. Մագուն, որ ներկայիս ապրում է Նոր Ջուդայում եւ հրճում ու ուրախանում է ջերմ հոգով: ■

Նոր Ջուդա

# Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Սերոժ Թիլիմեան

1254 թականին Հեթում թագաւորը Ղարադորումում հանդիպում եւ բանակցութիւններ է վարում Մանգու մեծ խանի հետ: Բանակցութիւնների հիմամբ երկու կողմերի համար ստեղծում էր գործուճեութեան հսկայ ասպարէզ: Մոնղոլները քրիստոնեաների նկատմամբ բռնել էին նըպաստաւոր դիրք, մինչեւ անգամ մոնղոլ ասագանու մի հատաւոր պատրաստ էր ընդունելու քրիստոնեութիւնը իբրեւ պետական կրօն: Կիլիկեան հայկական թագաւորութիւնը աշխատում էր շահագործել այս նպաստաւոր կացութիւնը:

13-րդ դարի կեսերին կաթողիկ եկեղեցու հովապետը քարոզչական ծաւալում աշխատանք սկսեց ընդդէմ Հայաստանի Առաքելական եկեղեցու: 1246 թականին Հռոմի Պապը Կիլիկիայի հայոց Ա. թագաւորին յղած գրութեամբ հայոց եկեղեցու դաւանանքը համարելով հերձաւորական, կաթողիկ եկեղեցու գիրկն էր հրաւիրում հայերին: Հռոմի եկեղեցին հիմնուած համարելով Պետրոս Առաքեալի՝ Քրիստոսի սիրեցեալ աշակերտի միջոցով եւ պապին Պետրոսի տեղակալը ներկայացնելով, բոլոր եկեղեցիներից պահանջում էին ընդունել նրա՝ պապի գերիշխանութիւնը: «Հռոմի աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ եւ արձակելոյ, եւ ծառայութիւն պարտին մնա ամենայն եկեղեցիք»: գրում էր պապը հայոց թագաւորին: Նոյն ժամանակաշրջանում Կիլիկեան հայկական թագաւորութիւնը տնտեսական եւ քաղաքական սերտ կապերի մէջ էր եւրոպական երկրների եւ Մերձատր արեւելքում ստեղծած քրիստոնեայ իշխանութիւնների հետ: Այս երեսոյքը պատճառ էր դառնում, որ աշխարհիկ իշխանութիւնը, ելնելով իր շահերից, համաձայն էր զիջումների գնով միութիւն հաստատել հայ եւ կաթողիկ եկեղեցիների միջոյ: Մակայն Հռոմկլայում հաստատուած Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը դեռեւս ի զօրու էր պաշտպանել իր դիրքերը կաթողիկ հովապետի դէմ եւ հակահարած տալ: Հեթում թագաւորը վերետում յիշուած պապի գրութեան մասին տեղեակ է պահում Հռոմկլայում հաստատուած Կոստանդին կաթողիկոս Բարձրաբերդոցուն եւ ստանում նրա պատասխանը: Կաթողիկոսը պապի գրութեան մէջ «Հնգետասան սխալ եւ անընդունակ բան» գտնելով վճռականօրէն մերժում է կաթողիկ եկեղեցու նախապատուութիւնը՝ այն տրամաբանութեամբ, որ Քրիստոսի 12 աշակերտները համահաւասար պատիւ եւ իշխանութիւն ունեն: Կաթողիկ եկեղեցու հիմնադիրներ Պետրոս եւ Պօղոս Առաքելայների հետ հաւասար իշխանութիւն ունեն Հայաստանի Առաքելական եկեղեցու հիմնադիրներ՝ Թադէոս ու Բարդուղիմէոս Առաքեալները:

Հինգերորդ դարում հիմք առած առաքեալների գործունեութեան եւ նահատակութեան պատմութիւնը քաղաքական յատուկ իրավիճակի շնորհիւ արեւի մեծ արձագանք է գտնում Կոստանդին կաթողիկոսի աթոռակալութեան

ժամանակաշրջանում, որոշակի տեղ յատկացնելով նըրանց շիրիմների համար: Ահա այս ժամանակաշրջանում է, որ Կոստանդին Կաթողիկոսը զոյգ նպատակներով առաջ է քաշում Թադէոս Առաքեալ վանքի վերաշինութեան հարցը եւ այն դարձնում նորաստեղծ թեմի կենտրոն: Թեմի իշխանութեան սահմանները անցնելով Արտագ գաւառից տարածում էին նաեւ շրջակայ գաւառների վրայ իրենց մէջ առնելով նաեւ Մարաղա եւ Թարիզ քաղաքները, որ դարձել էին մոնղոլ տիրակալների վարչաքաղաքական կենտրոններ: Արտագի թեմի կազմութիւնը առաջադրուած էր մի կողմից Կիլիկեան թագաւորութեան դաշնակից մոնղոլական իշխանութեան հարեւանութեամբ, սպա միւս կողմից միտում էր հակահարած տալ կաթողիկ եկեղեցու իշխանատենչութեանը:



Կոստանդին կաթողիկոսը Յովսէփ վարդապետին նշանակում է նորաստեղծ թեմի առաջնորդ, յատուկ կոնդակով (1247թ.) որոշում է, վերետում նշուած թեմի սահմանները եւ միութեան միջոցներ պրամադրելով օժանդակում է վերաշինութեան աշխատանքներին: Յովսէփ վարդապետին յաջորդում է Տիրացու եպիսկոպոսը: Սրա ժամանակաշրջանում էր, որ Լեւոն Գ. թագաւորը Արգու խանի արքունիքը այցելելու ճանապարհին հիւրընկալում է վանքում: Տիրացու եպիսկոպոսի շնորհիւ յայտնաբերել են Սուրիասեանց սրբերի նշխարները, շէնացել է Կողբայ վանքը՝ վերստանալով նախկինում իրեն պատկանած կալածները:

1295 թ. աշնան ամիսներին մոնղոլական գահի համար մղող մարտերի ընթացքում խիստ տուժեցին քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, արեւելքին Նախիջեւանի, Արտագի եւ Մարաղայի շրջաններում գտնուող մեծ թուկ եկեղեցիներ: Այս արիւնայեղութիւնների ժամանակ վնասուեց նաեւ Ս. Թադէի վանքը, իսկ Տիրացու եպիսկոպոսը տանջանքների ենթարկուեց ու կողոպուտեց:

Նոյն ժամանակաշրջանում նաեւ տեղի է ունենում Կիլիկեան թագաւորութեան քաղաքականութեան շրջադարձը: Մոնղոլները ընդունել էին մահմեդականութիւնը եւ այլեւս հակուած չէին Կիլիկեան թագաւորների հետ բարեկամական յարաբերութիւն պահպանելու ուղեգծին: Այս պայմաններում Հեթում Բ-ը, եւրոպական երկրներից օգնութիւն ստանալու յոյսով պատրաստ էր ընդունելու կաթողիկ եկեղեցու գերիշխանութիւնը: Ահա այս իրավիճակում էլ Տէր Տիրացուից յետոյ Ս. Թադէի վանքի առաջնորդութիւնը յանձն առաւ Չաքարիա եպիսկոպոսը, որ յայտնի է նաեւ Ծործորեցի մականունով: ■

Շար. 4

àñáß³ İÝ³ ñİÝ»ñ  
ŞP³ ÑÝ³ Ü¿ ü »ñ¹ áí èÇ! ¼á áèÇ  
í »ñ³ µ»ñ»³ Ē Á³ Ü³ Ý³ İ³ İÇó  
Ñá. »µ³ ÝáóÃ»³ Ý i »è³ ÝİÇóÝÇó

Մեսրոպ Բալայեան  
Դոկտոր- պրոֆեսոր  
բարձրանիչ՝ ճարտ. Նիկիտ Միրզայեան

Օրինակ՝ «Ձայ»-ի ու «Մուղաբե»-ի պատմածքը, որ-տեղ «Միմորդ»-ը<sup>1</sup>, կաթնակեր «Ձայ»-ին գտնում է «Ալ-բորգ» սարի ստորոտում եւ նրան իր բոյնը տանելով, կա-թի փոխարէն, կերակրում է իր արիւնով: Գիտականօրէն ապացուցւած է, որ թարմ ու տաք արիւնով կարելի է մի առ ժամանակ սնել մանուկին՝ կաթի փոխարէն: Ի դէպ համաշխարհային լրատւական միջոցները լայնօրէն ար-ձագանքեցին Հայաստանի ահաւոր երկրաշարժին, երբ մի ինքնուրաք մայր, օրեր շարունակ մնալով խարաներ բետոնէ աւարի տակ, իր մանուկին սնեց մատների ար-եամբ, մինչեւ նրանց փրկելը փրկարար ուժերի միջոցով: Ընդհանրապէս կարելի է ասել, որ «Շահնամէ»-ի պա-տմաներում, մտաւորապէս միշտ եւ բոլոր պարագանե-րում նկատի են առնւած հոգեբանութեան օրէնքներն ու օ-րինաչափութիւնները:

Ակնարկենք մի քանի պարագաներին: «Ռոստոմ» ու «Մոհրաբ» պատմածքում, «Մոհրաբ»-ի իր հօր ձեռքով սպանելուց յետոյ, բացի այն շքեղ զին-ւորական յուղարկւորութեան, որ այնքան կենդանի ու գեղեցիկ է նկարագրւած եւ այնքան է նմանում ժամանա-կակից զինուորական յուղարկւորութիւններին, յուղար-կւորները (ոչ զինուորական) լաց ու կոծ անելով ու ողբա-սացութեամբ, չանգում են իրենց դէմքերը, պատառտում զգեստները եւ բուռով հող են լցնում իրենց գլխին: Սա ժա-մանակակից որոշ հոգեբանների տեսութեամբ, գնահատ-ւում է իբր մի տեսակ ինքնաշարժարում, որն ունի միսիթա-րական ու հանդարտեցնող արժէք: «Մոհրաբ»-ի մայրը՝ «Թահմինէ»-ն, ամենայնուրեւնալից պահին իր մագերն է փետում, «Մոհրաբ»-ի ձիւ բաշն ու պոչն է սրով հատում, բայց հետաքրքիրն այն է, որ սգի ու ողբասացութեան ընթացքին իր մտածողութիւնը հեռու չէ բանականու-թիւնից ու տրամաբանութիւնից: Նա իրեն կշտամբելով ա-սում է. «Ես ի՞նչու քեզ չուղեկցեցի, այլապէս «Ռոստոմ»-ն ինձ կը տեսներ, կը ճանաչէր, եւ դու չէիր սպանի»:

Սասցիկը, որ Ֆերդովսին, բարոյականութեան կորովի շատագով ու վարպետ է նաեւ: Իրաքանչիւր պատմը-ւածքի աւարտին, որոնցից մեծագոյն մասը ողբերգութիւն են ու նման Շեքսպիրի ու Ռասինի թատերգութիւններին, Ֆերդովսին հակառակ այս երկուսին, որոնք ոչ մի տեսակ բարոյական եզրահանգումներ չեն կատարում<sup>2</sup>, ընթեր-ցողին տալիս է՝ լաւ, օգտակար, փիլիսոփայական եւ նոյ-նիսկ միատիկական խրատներ, հետեւեալ բովանդակու-թեամբ, «Աշխարհը հաւատարիմ չի մնայ, մի անցուղի է, սիրելիիդ մահաւան դէպքում, լացն ու կոծը անօգուտ է, դու

<sup>1</sup> Առասպելական բռնուց:  
<sup>2</sup> Շեքսպիրի եւ Ռասինի ժամանակաշրջանում բարոյագիտա-կան եզրահանգումը թողնում էին ընթերցողին եւ հանդիսա-տեսին:

Յաւակցական



Խոր կսկիծով տեղեկացանք՝ վա-ղաժամ եւ առյաւէտ կեանքին հրա-ժեշտ է տւել իրանահայ անսակար-կելի հայրենասէր, մարդկային ամե-նավեհ տեսլներով օժտուած եւ թեր-թիս ամենամօտ բարեկամների՝

Սուրեն Աբեղեանը

«Լոյս»-ի խմբագրական կազմը իր սրտագին ցա-ւակցութիւնն է յայտնում հանգուցեալի անմիջական հարազատներին, «Մայիտակ» սրահի տնօրինութեան եւ նրա յիշատակը վառ պահող բոլոր թեմրանահայե-րին:

Էլ եւ մահանալու»։Նման արտայայտուած մի միտք, ժա-մանակակից հոգեբանութիւնում ճանաչւած է որպէս ամե-նաազդեցիկ պաշտպանական մեխանիզմներից մէկը:

Ի դէպ բոլոր դիւցազներգութիւններին նման այստեղ էլ ամէն ինչ Աստծու կողմից է ծրագրւած ու նախատեսւած: (Յունական առասպելներում՝ Քրիստոսից առաջ՝ չա-տրւածների կողմից):

Աւելին, Ֆերդովսու պատմածքներում նաեւ, նման միւս ազգերի դիւցազներգութիւններում կայ մի տեսակ ճակատագրապաշտութիւն<sup>3</sup>: «Ռոստոմ»-ը խաբում է «Մոհրաբ»-ին, որպէսզի փրկելով նրա ձեռքից չսպանի: «Մոհրաբ»-ն իր վերջին շունչը փչելիս «Ռոստոմ»-ին ասում է. «Իմ ծնունդին արդէն ճակատագրւած էր, որ ես պիտի ապանւէի հօրս ձեռքով»:Քիչ մնացած «Մոհրաբ»-ի մահանալում «Ռոստոմ»-ը «Գուղարգ»-ին ուղարկում է «Քաւուս»-ի մօտ, որպէսզի նրանից բախասան<sup>4</sup> վերցնի, բայց մերժում է եւ ասում. «Եթէ «Մոհրաբ»-ն որջ մնայ, նա նորէն կը ձգտի տիրանալ իմ գահին»: Ֆերդովսու ա-սածով, «չկայ թագաւոր առանց քէնի»: Երբ ինքը «Ռոս-տոմ»-ը, բախասան ձեռք բերելու նպատակով մեկնում է արքունիք, լուր է հասնում, որ «Մոհրաբ»-ն արդէն մահա-ցել է: «Ռոստոմ»-ի հակազդեցութիւններն ու վարելակեր-պը այդ պահին շատ բնական ու սովորական են լինում, ճիշտ այնպէս, ինչպիսին լինում է մի սովորական մարդու մօտ, եւ սա հոգեբանօրէն ամբողջովին հասկանալի է: (Իհարկէ նկատի առնելով այն ժամանակաշրջանի աւան-դութիւններն ու սովորութիւնները, եւ «Ռոստոմ»-ի ա-ռանձնայատուկ խառնուածքը):

«Ռոստոմը»-ը պատռում է իր դէմքը, կտրցող ծեծում ու ողբ է ասում, նոյնիսկ ինքնասպանութեան է դիմում, բայց նրան արգելք են լինում եւ ասում. «Յամենայն դէպս մահը արդարութիւն է եւ բոլորը մի օր պիտի մահանան ու հող դառնան, թէկուզ գլխիդ լինի թագ կամ սաղաւարտ»:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ֆերդովսին իր արտակարգ հանճարով կարողացել է հոգեբանութեան գիտութեան չափանիշներն ու օրինաչափութիւնները սրանից դեռեւս մէկ հազարամեակ առաջ մեծ մասամբ իր երկում նկատի առնել եւ գործադրել:■

Ճար. 4 եւ վերջ

<sup>3</sup> Fatalisme  
<sup>4</sup> Գեղ, որ փրկում է մահամերձին:

## Մշակոյթ

*Վերջապէս իրականացաւ ծերունագարդ մտաւորականի իղծը: 90 տարիները բոլորած բանաստեղծ, հասարակական գործիչ եւ համբերատար մտաւորական Պետրոս Քաջբերունուն յաջողեց իր աւարտին հասցնելու 15 տարուց ի վեր աշխատանքը: Թող նա այդ առումով օրինակ հանդիսանայ մեր երիտասարդների համար: Այսքանը մեր կողմից, իսկ նրա գործի վերլուծութիւնը թողնենք Հայաստանի բանասիրական գիտութիւնների դոկտոր եւ հանրայայտ պրոֆեսոր Գառնիկ Ասատրեանին:*

Խմբ.

### Պետրոս Քաջբերունին եւ ժամանակակից հայերէնի օտարաբանութիւնները

Գառնիկ Ասատրեան  
Բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր

Իրանահայ ճանաչած բանաստեղծ, գրող եւ հրապարակախօս Պետրոս Քաջբերունին ծնել է 1912 թ. Արեւմտեան Հայաստանի Աղբակ գաւառում: Մեծ Եղեռնից փրկւելով, բազում փորձութիւններ անցնելով՝ ի վերջոյ հաստատում է Իրանում, ուր ընտանիք է կազմում, ծնում հինգ զաւակներ, տասնամեակներ ամենակտիւ մասնակցութիւն է բերում համայնքի գրական-մշակութային կեանքին, հրատարակում բանաստեղծական եւ արձակ բազում գործեր: 1987թ. գաղթում է ԱՄՆ, եւ մինչ օրս բնակւում է այնտեղ: Պ. Քաջբերունու ստեղծագործութիւնները՝ արձակ թէ չափածոյ, աչքի են ընկնում նուրբ քնարականութեամբ, փիլիսոփայական խոր ընդհանրացումներով, հայրենասիրական զգալի լիցքով եւ մաքուր ու անաղարտ լեզուով:



Պ. Քաջբերունին պատկանում է հայ գրականության այն ներկայացուցիչների թւին, ովքեր խօսքի հանդէպ իրենց սէրը չեն սահմանափակում գրական երկեր հեղինակելով միայն, այլ յաճախ դուրս են գալիս գեղարեստի սահմաններից ու ոտք դնում լեզուավերլուծութեան, բառաքննութեան ու բանասիրութեան ասպարէզ: Դրա համար լաւ գրող լինուց զատ, ինչ խօսք, պէտք է լինել լայն պատրաստութեամբ, լեզվի շունչն ու ոգին ընկալող, լեզուագիտութեան կանոններին տեղեակ մարդ, բարձր կուլտուրայի անձնատրութիւն:

Պ. Քաջբերունու ներկայիս գործը՝ «Ժամանակակից հայերէնի օտար բառերի բացատրական բառարանը» դրա լուսագոյն օրինակն է:

Կոթողային այս աշխատանքը՝ ծերունագարդ գրողի magnum opus-ը, ըստ էութեան, հայ բառարանագրութեան վերջին տասնամեակների երեւելի նմոյշներից է. հայանցիկ մի հայեացքն իսկ բառական է ըմբռնելու այս երկի նշանակութիւնը հայերէնագիտութեան եւ առհասարակ հայ մշակոյթի համար, պատկերացնելու այն հսկայական աշխատանքը, որ հեղինակը ներդրել է դրա մէջ: Առաջին անգամ, փաստօրէն, փորձ է արւել ի մի բերելու մեր գրական լեզուում տեղ գտած օտար ծագում ունեցող նորաբառութիւնները՝ պատշաճ բացատրութիւններով, գրական

գեղեցիկ հայերէնով: Ընդ որում, անհրաժեշտութեան դէպքում, բերում են առանձին բառերի հնարաւորին չափ առաւել լիակատար տարբերակային համակարգերը, որոնք հանգում են տարբեր աղբիւրների եւ արտացոլում փոխատու լեզուների հնչիւնային առանձնայատկութիւնները: Աշխատութիւնն իր էջերում պարփակւում է նաեւ ըզգալի թով բառամիտորներ, որոնք գլխաւորապէս տարածում ունեն խօսակցական լեզուում եւ ժարգոններում: Այսպիսով, Պ. Քաջբերունու բառարանը ձեռք է բերել համապարփակ բնոյթ եւ, անտարակոյս, մեծ հետաքրքրութիւն է առաջացնելու մեր գրագէտների ու հայոց լեզվի սիրահարների շրջանում:

Փոխառութիւնները՝ բնիկ տարրի հետ միասին, լեզվի անկապտելի մասն են կազմում եւ նրա հարստութիւնն են: Ոչ մի լեզու գերծ չէ օտար ներմուծումներից, որոնք դիտելի են առաւելապէս բառապաշարի համակարգում: Մանաւանդ հայերէնը դարերի ընթացքում արտակարգ ընդունակութիւն է ի յայտ բերել օտար տարրեր փոխառելու եւ դրանք իր ընդերքում լուծելու մէջ: Հայերէնի իրական կամ փոխառութիւնների հսկայական կորպուսն, օրինակ, այնպէս է մերած ու հայացած, որ միայն համեմատաբանական նուրբ եւ ճշգրիտ վերլուծութեամբ է հնարաւոր դրանք զատել բնիկ, հնդեւրոպական ծագման բառամիտորներից: Փոխառութիւնն ընդհանրապէս մեր մշակոյթին յատուկ երեւոյթներից է. հայերը միշտ հարեւաններից վերցրել են նորը, զնահատելին եւ յարմարեցրել իրենց, հայացրել: Այնպէս որ, փոխառութիւնը միշտ չէ, որ այսպանելի է. միայն թէ ոչ բոլոր մշակոյթներն են, որ կարող են փոխ առնել եւ չլաքարել: Նման բան կարող են թոյլ տալ իրենց, թերեւս, մեծ ժողովուրդները՝ իրենց ուրոյն մշակոյթով, լեզուով, ազգային կերտածքով եւ հարուստ պատմութեամբ:

Ներկայ բառարանն ընդգրկում է, իհարկէ, հիմնականում տեխնիկական տերմիններ, գիտութեան տարբեր ճիւղերին (քիմիա, Ֆիզիկա, կենսաբանութիւն, բժշկութիւն, բուսաբանութիւն եւ այլն) վերաբերող հասկացութիւնների անուանումներ, որոնց մի զգալի մասն այսօր հայերէնում ունի համապատասխան ձեւեր՝ կերտած մեր լեզվի սեփական հնարաւորութիւնների հիման վրայ: Մակայն այդ բառապաշարի շօշափելի մի մասը դեռեւս հանդիպում է գրականութեան էջերում: Բացի այդ, ինչպէս նշուեց, բառարանում որոշակի տեղ են զբաղեցնում նաեւ խօսակցական լեզուում մինչ օրս օգտագործող օտարաբանութիւնները:

Աշխատութեան աղբիւր են հանդիսացել տարբեր բառարաններ, գրական աշխատանքներ, գիտական երկեր, ինչպէս նաեւ հեղինակի սեփական գրառումներն ու դիտարկումները:

Լինելով բառ ու բանի մարդ ու մեծ էրուդիցիայով օժտւած հեղինակ, Պ. Քաջբերունին, ինչպէս դժուար չէ նրկատել, արհեստավարժ լեզուբան չէ, որը սակայն, ըստ իս, շօշափելիօրէն չի ազդել աշխատութեան որակի վրայ: Ինչքան էլ ոչ ակադեմիական այս բառարանը, անշուշտ կարելու է մեր մշակոյթի զարգացման վերջին տարիների հոլովոյթում եւ աներկբայելիօրէն իր տեղն է ունենալու հայ բառարանագրութեան պատմութեան մէջ:

Այս հանգամանքն ի նկատի ունենալով է, որ Իրանագիտական Կովկասեան Կենտրոնի Գիտական խորհուրդը որոշեց այն հրապարակել իր մատենաշարով: ■

# Փոքրիկ երախտագետը

Վ. Վաչագան

15.12.89, Թեհրան



Երկար ժամանակ ընթերցանութեամբ էի զբաղած, ինչ-որ նիւթ զբաղեցրել էր ինձ: Ամենայն ուշադրութեամբ եւ կլանւած կարդում էի: Երբ արարտեցի ինձ այդքան հետաքրքիր պատմածքը, յոգնած աչքերիս հանգատութիւն տալու համար մի կողմ դրի ընթերցւած գիրքը ու սկսեցի նայել դրանում երթեւեկող մարդկանց: Ինչ-որ բնագրով մղած հետաքրքրում էի անցնող ժողովրդի նոյնիսկ ամենաանընկատ շարժումներով: Մէկը անցնում էր սրնթաց, թում էր՝ ինչ-որ տագնապ է նրան սպասում, կամ երեւի վազում էր իր օրայ հացը հայթայթելու գործից ետ չմնալու համար: Միւսը անցնում էր մտամտող, այնքան մտազբաղ, որ եթէ կողքին մի պայթուցիկ պայթէր՝ հազիւ թէ սրտիւնէր: Մի ուրիշը ծայրում էր եւ յանկարծ ինչ-որ դառը բան յիշելով տխրում: Մի անցողը եւս շատ բարձր տրամադրութեան մէջ էր, երեսում էր նրան յաջողուել է երկար շաքք կանգնելուց յետոյ գնել մի անհրաժեշտ իր եւ այն էլ պետական գնով: Ուրախ էր իր գնումի համար, սակայն կողքը ժամանակի համար բոլորովին չէր էլ մտածում: Մի գոյգ եւս անցնում էին թեւանցուկ, ուրախ տրամադրութեան մէջ, արդեօք նրանք ճաշակե՞լ էին կեանքի դժարութիւնները...

Ժողովրդի անցողարձով տարած մի առ ժամանակ չեմ նկատում խանութի ցուցափեղկը զննող փոքրիկ աղջկան: Նրա խոր հառաչանքը, որ երեսում էր կրծքավանդակի վայրիվերումներից, զրարում է իմ ուշադրութիւնը: Նա երկար նայեց խանութի ցուցափեղկին եւ հեռացաւ: Բայց կարծես ինչ-որ բան տեղ թողած լինէր, մերթ ընդ մերթ կանգնում էր եւ երեսը դարձնում դէպի ցուցափեղկը, ուր տեղադրւած էին վաճառելիք ապրանքները: Վերջապէս դանդաղ քայլերով հեռացաւ, բայց կրկին վերադարձաւ: Ցուցափեղկի մօտ կանգ առաւ: Խոնարհուել էր նրա գլուխը եւ այդ բարձրահասակ աղջկայ հասակը կարծես կիսած լինէր:

-Ի՞նչն է նրան այդքան հոգս պատճառել,- հարց էի տալիս ինքս ինձ: Մի պահ մտածում էի հաւանաբար անտեղի ենթադրութիւններ եմ անում, իսկ յետոյ ինքս պատասխանում եմ իմ հարցին: -Եթէ այդպէս է, ապա նրա խորհրդատու հայեացքը, խոր հառաչանքը, զգալի ընկճումը...- Ո՛չ, հազար անգամ ոչ:

Հագնւած էր շատ համեստ, նրա հագուստը վարդագոյն էր: Արդեօք նրա կեանքն էլ իր շորի պէս վարդագոյն էր: Խոշոր աչքեր ունէր, իսկ այդ գեղեցիկ, խոշոր եւ խորհրդատու աչքերը կիսով փոքրանում էին, երբ նա օգտընում էր ակնոցից: Այդպիսի խոշորացոյց ակնոցից օգտընելով հանդերձ նա թեքը կարդալու համար հայում էր ապակում: Հոգիս ալեկոծում էր, կարծես թէ նրա հոգսերը իմը լինէին: Մտածում էի պիտի գտնեմ նրա հոգսերի դրոշմապատճառը, բայց ի՞նչպէս սկսեւ, ի՞նչ միջոցի դիմել: Շատ խորհեցի այդ մասին, բայց յարմար ելք չգտայ: Արոշեցի սպասել:

Պատասխանը ստանալու համար ստիպեցի երկար սպասել: Զայլելով մօտեցաւ ինձ: Ես ձեռացրի իբրքէ ոչինչ չեմ նկատել:

-Աղա՛, սկսեց խօսել աղջիկը համարեա դողողուն ձայնով,- շատ ներեղութիւն, քանի արժէ այն...-, ձեռքը մեկնելով դէպի մտադրած իրը: Նրա ձայնի հետ դողում էր նաեւ մեկնած ձեռքը: Յայտնում եմ զինը: Գլուխը կախում է: Դադար է տիրում: Նա մնում է կանգնած անելանելի վիճակում: Հարցնում եմ արդեօք հաւանե՞լ է, թէ՞ ոչ: Հազիւ լսելի ձայնով ասում է.

- Հաւանել եմ բայց...

Նրա աչքերում արցունքի կաթիլներ եմ նշմարում: Ես դիտմամբ չտեսնելու եմ տալիս: Հարցնում եմ այդ իրը ո՞ւմ պիտի նվիրի: Իմ այդ խօսքի վրայ նա ժամանակաւորապէս մոռանում է իր վիշտը եւ արտասուքները սրբելուց յետոյ սկսում է պատմել: Յայտնեց, որ ներ պիտի առնի իր մեծ քրոջ համար՝ տարեդարձի առթիւ: Մեր հերոսուհին երեք տարեկանում արարի հետեւանքով կորցրել էր իր ծնողներին: Արքին խնամում եւ մեծացնում է նրա արագ քոյրը եւ դարձրեց ուղարկում: Նա իրեն նվիրում է կրտսեր քրոջը, որպէսզի քոյրը չզգայ ծնողների բացակայութիւնը: Այդ մեծատառով մարդը, այդ ազնիւ նվիրեալը նոյնիսկ հրաժարում է ժամանակին ամուսնանալուց՝ մտածելով ամուսնական կեանքը արգելք կը դառնայ իր վսեմ նպատակը իրագործելու:

Հասկացայ, որ նրա դրամը չի բաւարարում ընտրած ներքի համար: Հարցրի.

- Ի՞նչու ես ուզում անպայման այդ իրը գնել:

Չարմացած եւ խորհրդատու նայեց ինձ: Կարծես ուզում էր ասել դա ինչ անտեղի հարց է: Զգալով, որ իմ տած հարցը անհամագտացրել է նրան, փոխում եմ հարցիս ձեւը:

-Արդեօք ունեցած գումարիդ հաշիւը գիտե՞ս: Չի պատասխանում: Խոնդեցի, որ ունեցած դրամը յանձնի ինձ: Նրա յանձնած գումարը իրաւ շատ քիչ էր իսկ զնից: Յանձնեցի ցանկացածը, վերադարձնելով եւս մի չնչին գումար: Նա տատանում էր, բայց վերջապէս ընդունեց՝ երախտագիտութիւնը յայտնելով:

Ես այդ պահին ինձ երջանիկ էի զգում, քանի որ կարողացել էի մի բանով օգտակար լինել այդ երախտագետ աղջկան: Այդ մտքերի մէջ էի դեռ, երբ ներս մտաւ մի երիտասարդ կին: Նախ կասկածոտ եւ արհամարհական հայեացքով նայեց իմ համեստ խանութին, եւ ապա ինձ: Նրա արարքը ինձ սկզբում վիրտուրեց, բայց ինձ մի կերպ զսպելով հարցրի, թէ ի՞նչով եմ կարող օգտակար լինել նրան: Չայրոյթը զսպելով հարցրեց, թէ արդեօք ե՞ս եմ վաճառել իր ձեռքի իրը փոքրիկ աղջկան: Երբ ստացաւ դրական պատասխանը, անելի լրջացաւ եւ մտահոգ տոնով ասաց, թէ ինչքան ինքը գիտի քրոջը խնայած գումարը շատ քիչ է եղել, ապա ո՞րտեղից է բերել յաւելեալ գումարը: Նա խիստ յուզւած, երկմիտ եւ զայրացած էր երեսում: Դա ինքարկէ մի բնական երեւոյթ էր, նրա համար պարզ չէր եղելութիւնը: Նրա մտահոգութիւնները փարատելու համար, պատմեցի այն բոլորը, որ լսել էի փոքրիկ աղջկից: Յայտնեցի, որ փոքրիկի երախտագիտութիւնն է իմ օգնութեան դրոշմապատճառը:

Կարծես ինչ-որ մի մեծ հոգսից ազատւած լինէր, մանկական երեխայի պէս ուրախացաւ: Ուրախութիւնից հեկեկում էր: Նրա համար արդէն պարզ էր, որ քոյրը սխալ քայլի չի դիմել, համոզուեց որ իր ջանքերը ապարդիւն չեն անցել:

Ես տարիներ է չեմ հանդիպել այդ տարաբախտ քոյրերին, սակայն իմ յիշողութեան քարտեզի վրայ նրանք յախտեան անցնելի կը մնան: Նրանք օրինակելի մեծութիւններ են, մէկը՝ իր անձնագրութեամբ եւ միւսը՝ երախտագիտութեամբ: ■

1. Պարոն

## Մշակոյթ

### Նոր ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

#### с) ճ եւ y

1. *Բ* բաղաձայնից յետոյ լսում եւ գրում է *g* հնչիւնափոխութեան չենթարկուած հետեւեալ բառարմատներում.

պախուրց (սանձ)  
արցունք  
ապաթարց [ այս նշանը ( ) ]  
հարց  
մրցել

2. *Բ* բաղաձայնից յետոյ, եթէ լսում է *g* գրում է *ճ* միւս բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում. օրինակ՝

արվարձան (մօտակայք)	անվերադարձ
աշխատավարձ	արձագանք
արձակ	արձակուրդ
արձան	արձանագրել
բարձ	բարձել
բարձր	բարձրաբերձ
բացարձակ	դարձ
դարձվածք	դարձյալ
դերձակ	դերձան
դիմադարձութիւն	ընդարձակ
իրադարձութիւն	խուրձ
համարձակ	հանդերձ
հանդերձարան	հանդերձյալ
հերարձակ	հերձված
հորձանք	ծորձ-(լաթ, հագուստ)
մանկաբարձ	մերձավոր
ետադարձ	օրավարձ
սահձարձակ	որձ
որձաքար	վարձկալ
վարձ	փորձ
փորձանք	փորձառու

եւ այլն:

3. *Ղ* բաղաձայնից յետոյ լսում եւ գրում է *g* հետեւեալ բառերում.

քաղց  
քաղցր  
քաղցկեղ («աակ» կոչող հիւանդութիւնը):

4. *Ղ* բաղաձայնից յետոյ, երբ լսում է *g*, գրում է *ճ* բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում. օրինակ՝

մելամաղձոտ	ատաղձ
գուղձ-(հողիկոշտ)	դաղձ
դեղձանիկ	դաղձ
ըղձալ	իղձ
մաղձ	մղձավանջ
շնչահեղձ	իրահեղձ
փղձկալ	հեղձամաղձուկ-
բաղձանք	(խեղդող, շունչ կտրող)
գեղձ	

եւ այլն:

#### д) դ եւ թ

1. *Բ* բաղաձայնից յետոյ լսում եւ գրում է *թ* հետեւեալ անհնչիւնափոխ բառարմատներում.

արթուն	հարթ (տափակ)
խորթ (անհարազատ)	թարթել
հորթ (կովի ծագ)	մորթել
շողոքորթ	շուրթ
սաղարթ	քերթել
զվարթ	լուրթ (երկնագույն)
կիրթ	կարթ
թերթ	հերթ
մերթ	երթ
շորթել (դուրս կորզել)	պարթել
որթ (վագ)	քրթմնջալ
խրթին	փարթամ

2. *Բ* բաղաձայնից յետոյ միւս բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում, եթէ լսում է *թ*, գրում է *դ*. օրինակ՝

մարդ	բարդ
վարդ	բերդ
լարդ	զարդ
երդում	կարդալ
նյարդ	երդ (երդիկ)
երդակից	

եւ այլն:

3. *Ն* բաղաձայնից յետոյ լսում է *թ*, բայց գրում է *դ* հետեւեալ բառերում.

Կենդանի, անդամ, խնդիր:

Այդպէս է նաեւ *ընդ* նախածանցով կազմուած բառերի մէջ, օրինակ *ընդհանուր, ընդունել, ընդօրինակելի* եւ այլն:

Միւս բոլոր բառերի մէջ գրում է *թ*. օրինակ՝ կանթեղ, ընթրիք, ընթերցանութիւն եւ այլն:

4. *Չ* այնատրից յետոյ լսում է *թ*, բայց գրում է *դ* մի քանի բառերի մէջ օրինակ՝ օդ, վառող, Ադամ, Թադեոս, դադար:

Միւս բոլոր բառերի մէջ գրում է *թ*, ինչպէս՝ թաթ, թութ, բութ, եւ այլն: ■

### Մաքրած համար 18-ի լուծուած տարրերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	բ	ա	գ	ա	ս	տ		ա	գ	գ	ա	կ	ա	ն
2	գ	ա	գ		ն	ա	ն	ի	ր		ա	ր	ա	գ	ի
3	ա	գ	դ		ա	ր	ա	գ	ի	լ		գ	ր	ի	լ
4	թ	ճ	ր	ե	լ		թ	ի	ն	ա	կ	ա	լ		ա
5	ա	ա		լ	ու	ս	ա	թ	ա	թ	ա	խ		ա	ն
6	ն	ն	գ	ա	ր	ա	ն		ա	լ		թ		ս	
7	գ	ա	ն	կ			դ	ա	լ	կ	ա	հ	ա	ր	
8	ե	լ	ա		ս	ա		ճ	ի	ա	ն	ա	լ		ե
9			դ	ա		գ	ե	ր	ա	գ	ա	ն	ց	ե	լ
10	ո	տ		կ	լ	ա	ր	ա		ճ	կ	ա			ե
11	ս	ա		ն	ա	հ	ա	ն	գ		ա	պ	տ	ա	կ
12		խ	լ		թ	ա	գ	ա		ա	ն	ա	պ	ա	տ
13	ա	տ	ա	կ		ն	ա	լ	ե	լ		գ	ի		ր
14	խ	ա	ր	ա	գ	ա	ն		կ	ե	ս	օ	ր		ո
15	տ	կ	ա	ր		լ	թ		ս	ն	ա	ր		ա	ն



# Մշակույթ

ՏԻ 3 Ծ3 Կ13 ծա՛ն էի 3 Է՛ւէԱ՛|-Չ  
 ք»Ս3 1 նա՛ձԱ՛»3 Կ 3 էՉԱ՛ի

## Վաչիկ Վարդանյան



Նարեկ

Արդեն աւանդոյթ է դարձել Հայաստանից գեղարուեստական խմբերի հրաւիրումը: Ինչ խօսք, որ գեղեցիկ եւ արդիւնաւէտ մտայղացում է: Սակայն ցաւօք պէտք է նշել, որ յաճախ հրաւիրելու հիմքերը կարծես չեն մշակուում, կամ առհասարակ նկատի չեն առնուում: Վերջերս հրաւիրուած խմբերի մէջ հանդիպում ենք մի այնպիսիներին, որոնք արժանի մակարդակ չեն ներկայացնում: Դրանք երբէք չեն կարող համարել Հայաստանի բարձրարեստ մշակույթի պատիրակներ: Այդպիսով ոչ միայն չեն շահում, այլ վիրաւորում ենք իրանահայ մշակույթատեր հանդիսատեսին: Երբեմն հրաւիրում են պատահական խմբերին չզիտես ինչ-ինչ նկատառումներով: Եթէ նպատակը փող վաստակելն է, ապա դրա համար կարելի է փնտռել այլ միջոցներ: Եկէք մշակույթը մնամատիպ նպատակների առարկայ չդարձնենք:

Իրան այցելած խմբերի մէջ իհարկէ կային նաեւ այնպիսիները, որ ինչ-որ չափով մակարդակ էին ներկայացնում:

Դրանց շարքին կարելի է դասել Փարիզի «Բոհեմ քաւորում» ընկերութեան հովանու ներքոյ ժամանած քաւորախումբը, որը ներկայացնում էր երկու քաւորգութիւն: «Նայիրի» սրահում ականտես եղանք դրանցից մէկին՝ «Տաղանդատը ստախօսը»:

Սոյն քաւորգութիւնը «Պահանջում է ստախօս»-ի վերամշակուած տարբերակն էր: Նարեկ Դուրեանը եւ Ջաւէն Աբրահամեանը փորձել էին փոփոխելով այն՝ դարձնել այժմեական: Վերամշակումը ըստ իս կատարուած կը համարւէր յաջող, եթէ չլինէր վերջին հատուածը:

Հայաստանի դեպուտատներից մէկը՝ Սուկրատ Սողոյեան փնտրում է իր բացասական ցանկութիւնները իրագործող մի օգնական, որը ընդունակ լինի կատարել ստախօսութեան: Այդ միջոցին նրա կինը առաջարկում է իր սիրելեանին՝ Մատթեոսին, բայց յանկարծ երեսն է գալիս մի «տաղանդատը» ստախօս՝ Վաչիկ Խաչիկեանը: Սակայն նրա չար բախտից հան-

դիպումից առաջ պատահականօրէն հանդիպում է մեզ ծանօթ դեպուտատին եւ բռունցքի հարուածով վիրաւորում է վերջինիս այտը: Ըստ երեւոյթին նա հարկադրուած պիտի թողնէր եւ հեռանար, սակայն «տաղանդատը» ստախօսը յօրինում է իր համոզիչ սուտը, որի շնորհիւ աշխատանքի է անցնում Սողոյեանի մօտ՝ որպէս օգնական:

«Տաղանդատը» ստախօսը շարքից հանում է Լաւորայի սիրականին եւ գործերը սկսում են առաջ ընթանալ, սակայն հետագայում նրանք հանդիպում են մի պնդեղ եւ համառ այցելուի, որը դիմել էր, իր մօր բնակարանի հարցով: Երկար ժամանակ հաւատում է ստախօսի խոստումներին, բայց վերջապէս մի յարմար առիթով բռնեցնում է բոլոր հանցաւորներին՝ Սողոյեան, Լաւորա, Վաչիկ Խաչիկեան, Ալլա՝ Սողոյեանի քարտուղարուին:

Այնինչ արտառոց էր թում՝ վերջին տեսարանի լուսանկարին բաժինն էր, որտեղ Օննիկը՝ յամառ այցելուն ժողովրդին հաղորդում էր, որ այդ Սողոյեանները չեն իրական Հայաստանցիք, դրանք բացասական տարր են, որոնք ընդամենը կազմում են ժողովրդի մի չնչին տոկոսը...

Միթէ մարդիկ զրկա՞ծ են տարրական գիտակցութիւնից: Ո՞վ չզիտէ, որ մի երկրում կը լինեն բոլոր տեսակի մարդիկ, կը լինեն աւազակներ, գողեր, թաւանջիներ, դաւաճաններ, եւ իհարկէ մաքուր հայրե-

նասերներ, ազգասերներ, անճնուրաց ստեղծագործողներ, անվերապահ աշխատողներ եւ այլն: Պատշաճ է նշել, որ ցաւօք բեմայարդարումը շատ թոյլ էր եւ բացակայում էին անհրաժեշտ յարմարութիւնները:

Իսկ բեմադրութիւնը եւ խաղարկութիւնը ընթանում էր շատ յաջող: Ջա-



Փիրուգա Կոզակեան



ՌաՖայէ Բոթանջեան



Քրիստինէ Յովհաննիսեան

ւէն Աբրահամեանը Սողոյեանի դերում, Փիրուգա Կոզակեանը Լաւորայի դերում, Քրիստինէ Յովհաննիսեանը Ալլայի դերում, հանրայայտ ՌաՖայէ Բոթանջեանը Մատթեոսի դերում եւ Աշոտ Քարտաշեանը Օննիկի դերում, բոլորն էլ վարպետօրէն ներկայացրին յաճախարարած կերպարները: Բայց այդ բոլորի մէջ պէտք է առանձնացնել Վաչիկ Խաչիկեանի դերակատարին՝ Նարեկ Դուրեան: Նարեկ Դուրեանը որ միեւնոյն ժամանակ քաւորախմբի բեմադրիչն էր, ներկայացաւ որպէս կատարելալ կատակերգու:

Յուսանք, որ առաջիկայում ներկայ կը լինենք Հայաստանից ժամանած եւ ինչու չէ նաեւ իրանահայ քաւորախմբերի բարձրակ ներկայացումներին: ■



# Մանկական

## ՄԱՅԻՄ՝ ՀԱՅՈՑ ՓԱՌՔԻ ԱՄԻՍ

### Հայ նոր սերունդ

Ձեռք-ձեռքի տուեք, միասնական, յարատև եւ վճռա-կան պայքարի ժամը հասել է:  
«Մայիս 28»ի գաղափարը այսօր այս է հրահանգում Ձեզ:

\*\*\*

### ՄԱՅԻՄ 28-Ի ՊԱՏԳԱՄՆ Է՝ Ամբողջական Հայաստան Ամբողջական Հայութեամբ

Մեծ եղեռնը տեղի ունեցաւ 1915-ին եւ ջարդարար թուրքը շնորհիւ իր կանխա-մըտածած ու ծրագր-րած ցեղասպանու-թեանը՝ յաջողեց տե-ղահանել եւ ջարդել մէկ ու կէս միլիոն հայեր:



Երեք տարի յետոյ, նոյն մահատակ Հայ ժողովրդի մնա-ցորդները աւերակների եւ մոխիրների տակից գլուխ բարձրացրեց, ուժերը մէկտեղեց եւ միասնականութեան շնորհիւ նետուեց կռի ղաշտ:

Մարդաբասպատ, Դարաքիլիսա եւ Բաշ Ապարան՝ երեք ճակատներում թրքական բանակների դէմ կռուեց հայ ժողովուրդը:

Հաւատքով կռուեց, իր զաւակները գոհեց, եւ ամուր կամքի շնորհիւ յաղթեց հայ ժողովուրդը, եւ 1918 թ. մայիսի 28-ին հռչակեց՝ Հայաստանի Ազատ եւ Անկախ Հան-րապետութիւնը:

\*\*\*

### Առաջադրանք՝

Հետաքրքրի՛ր եւ գաի՛ր վերոյիշեալ երեք ճակատնե-րում կռող զօրավարների անունները:

\*\*\*


### Հայկական Դրօշակ

Միրելի աշակերտ-ուհիներ՝  
Արդեօք մինչեւ օրս մտածե՞լ էք ի՞նչ խորհուրդ է դրո-ւած հայկական դրօշակի ամբողջութեան մէջ:  
Այդ գոյները կարծես բխում են մեր կեանքից:  
Կարմիրը՝ հայ ժողովրդի թափուած արիւնն է, կապոյ-տը՝ Հայաստանի կապոյտ երկինքն է, եւ մարնջագոյնը՝ խտացումը աշխատանքի:

\*\*\*

### Առաջադրանք՝

Գծի՛ր եւ գունատրի՛ր Հայաս-տանի դրօշակը:



### Հանելուկներ

Այն ի՞նչ բան է,  
Տեսքը սեւ,  
Չունի մարմին,  
Ունի ձու:

մզուի

Գլխին ձիւնէ  
Թագ ունի,  
Փէշին հազար  
Ակ ունի:

սղ



### Խաչրան

Բառերը գտի՛ր եւ գծի՛ր խաչրանում, իսկ մնացորդ տառե-րով կազմիր մի բառ, որ յայտնի մի երգի անուն է:

Մանուկեան,  
Ապարան, խաչ,  
մայիս, Դրօ, ազատ,  
հաւատք, քսանութ,  
դրօշակ, ճակատում,  
մարտ, հայ, Արամ,  
Յիսուս:

Մ	Ա	Պ	Ա	Ր	Ա	Ն	Ս	Յ
Հ	Ա	Ա	Ձ	Ա	Տ	Կ	Թ	Ի
Ս	Ա	Ն	Ա	Ր	Ա	Ա	Ռ	Ս
Ի	Խ	Յ	Ո	Շ	Դ	Ր	Ն	Ռ
Յ	Ա	Ա	Օ	Ի	Ր	Ա	Ա	Ս
Ա	Չ	Ր	Ա	Պ	Կ	Մ	Ս	Դ
Մ	Դ	Մ	Ա	Ր	Տ	Ե	Ք	Ր
Ծ	Ա	Կ	Ա	Տ	Ռ	Ս	Ա	Օ
Հ	Ա	Ի	Ա	Տ	Ք	Ա	Տ	Ն

### Համբարձում

Ս. Յարութեան տօնից քառասուն օր յետոյ, հինգշաբ-թի օրը, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Համբարձման տօնն է:

Համբարձումը՝ Յիսուսի փառաւորեալ մարմնով եր-կինք բարձրանալու ու իր Հօր՝ Աստծու աջ կողմը նստելու յիշատակն է: Համբարձումը տեղի ունեցաւ Չիթենեաց լե-ռան վրայ, առաքեալների աչքի առաջ: Այժմ լեռը կոչում է Համբարձման լեռ:

Համբարձման օրը ժողովրդական լեզուով կոչում է նաեւ «լիճակ»: Նոյն օրը, աղջիկները գոյնզգոյն զգեստ-ներ հագած՝ յատկապէս կարմիր ու կանաչ, ծաղկազարդ վայրերում կազմակերպում էին զբօսանք եւ վիճակ:

Դժբախտաբար այժմ միայն մնացել է զբօսանքի սո-վորութիւնը եւ վիճակը, Ձան Գիւլումը, ծաղիկ գովելը հա-մարեա մոռացել է:

*Կազմեց՝ Արմիտ Բարունեան*

# Ատամի գոյնափոխելը, նշանները եւ երեւոյթը

## Թարգմանեց դոկտ. Յ. Բրաչեանը



Ատամի գոյնափոխելը նկատելի է լինում էմալի (ատամի մամկած փայլուն մասը) կամ Dentin մասում (որը էմալի տակին է):

Ի՞նչ է ատամի անգոյնացումը: Այն ժամանակ, երբ էմալը սկսում է աճել, կաթի ատամների կամ մշտական ատամների ընթացքում:

Ատամի էմալի գոյնի վրայ մի քանի ազդակներ դեր ունեն: Ատամները կարող են խազատեն տարիների ընթացքում ուտելիքի գոյների կամ խմելիքների ազդեցութեան տակ: Որոշ հիւանդութիւններ կարող են ատամ անգունացման պատճառ դառնալ, ժառանգական կամ շրջապատող պարագաները (Environmental factors) կարող են թէ էմալը եւ թէ Dentin-ը գոյնի փոփոխութեան ենթարկել: Շատ քիչ անգամ վնասւածքներ ատամի տակի եւ ներքեի հիւսւածքների պատճառով են:

Fluoride-ի չափազանց պարունակութիւնը խմելիք ջրի մէջ, եթէ աւելի քան երկու P.P.M (part per million) կամ Ֆլորայտի բերանի ողողում հեղուկների (Fluoride Mouth Rinces) լինի կարող են բծերով ծածկւած սպիտակ մաս ստեղծել (mottled bleaching mangel):

Թէեւ մեծ քանակութեամբ քաղաքներում զարգացած երկրներում արեւստապէս աւելացնում են Fluoride-ը քաղաքի խմելիք ջրերի մէջ, չափը այնքան շատ չէ, որ էմալի գոյնի փոփոխութիւն տայ, բայց այդ քաղաքներում, որ բնական ջրերից են օգտւում կարող է Fluoride-ի քանակը շատ լինի եւ ազդի ատամի անգունացման վրայ:

Մայրերը, որոնք յղութեան ընթացքում ընդունում են Antibiotic, որոնց մէջ աչքի են ընկնում Tetracycline-ի ընտանիքը, ստեղծում են թուխ եւ մոխրագոյն գոյնափոխութիւն կաթի ատամներում (Baby's teeth): Այն երեխաները, որոնք Fluoride-ի քաղաղորութիւն իրենց մշտական ատամների աճի ընթացքում կարելի է միանման ատամի անգունացում տալ:

Ի՞նչ պէտք է անել անգունացման առաջն առնելու համար :

Կարելի է Fluoride-ի չափը եւ որակը որոշ հիմնարկութիւնների միջոցով ստուգել շրջանի ջուրը:

Յղութեան ժամանակ չպէտք է ընդունել Tetracycline-ի կապ ունեցող Antibiotic նման դեղորայք ուրը տարեկանից երեխաներին չպէտք է տալ:

## Ե՞րբ պէտք է այցելել ատամնաբոյժին


Էմալի գոյնը փոխելը կարող է կոզմետիկական խընդիր լինի, դեռեւս ատամի կառուցածքային պրոբլեմն (problem) է: Պէտք է այցելել ատամնաբոյժին, որ ստանալ ճիշտ եւ յարմար ախտորոշում (diagnosis), հասնուել, որ ինչ բուժման ընտրութիւն ներկայ ժամանակ գոյութիւն ունի:

## Բուժում

Պատրաստի սպիտակացնելու խմորներ կարող են մասամբ բարելաւել էմալի գոյնը: Ծանր եւ ուժեղ գոյնի փոփոխութիւնը, կարիք ունի մասնագիտական աշխատանք՝ էմալի կապանք (enamel bonding) մեթոդով, որը լաւ արդիւնք ունի:

## Գործընթացի նախատեսութիւն (Programosis)

Գերազանց կոսմետիկական արդիւնք ստանալ: Մեթոդները կարող են լինել քիչ ծախսով մինչեւ թանկ յարմարութիւններ: Գոյութիւն ունեն պարզ ատամների մաքրելու խմորներ, սրբելու թեթեւ ատամների վրայ գոյները, օրինակ սուրճի եւ թէյի ներկերը (stains): Աւելի խորը գոյները կարիք ունեն մասնագիտական եւ տեխնիկական



աշխատանք՝ յարմար տաշտակով եւ յատուկ սպիտակացնել խաւար ատամները: Այս մեթոդով անհրաժեշտ է, որ ատամը առողջ լինի եւ զգալուն չլինի: Ովքեր լցրած ատամներ բերանի առաջի մասում ունեն, կարող է կարիք ունենան կրկին լցնելու: Ումանք կարիք ունեն յատկապէս աշխատանքի, պատրաստել վերելի եւ ցածի ծնօտի չափով տաշտակներ, մէկը լցնում են սպիտակացնող gel, պահել մի քանի ժամով ատամնաբոյժի աշխատավայրում կամ office-ում: Այս աշխատանքը կրկնում է օրեր, շատ առաջացած վիճակում միգուցէ մի քանի շաբաթ կարիք լինի: Եթէ այս աշխատանքը ատամնաբոյժի կլինիկում կատարուի, աւելի լաւ արդիւնք ունի եւ ծախսը շատ է: Ընդհանրապէս, ատամնաբոյժը, իր խորհուրդով կը տեղեկացնի, որ ինչ մեթոդը աւելի յարմար եւ որակեալ է: ■

## Տեքուէի

«Լոյս» երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- ▲ Յարութիւն Արսէնեան
- ▲ Ժիրայր Օլմեսեան
- ▲ Գրիգոր Ալլահվերդեան
- ▲ Վարդան Վարդանեան
- ▲ Արմենակ Պարսամեան
- ▲ Մարգարիտ Մովսիսեան (Փիրջանի)
- ▲ Սիրվարդ Բաղունեան (Յարութիւնեան)
- ▲ Լուսիկ Մատթէոսեան
- ▲ Նւարդ Շահվերդեան (Վարդան)

## Ժամանց

# ԽԱՉԲԱՌ ՀԱՄԱՐ 19

Կազմեց՝  
Գագիկ Անդրեասեան

### Շորիզոնական

- Պինդ կտաներ, որ ամբացնում են նախ կայմերին ու բաց են անում քամու դեմ-արինակից, բարեկամ:
- Նաեւ վառելամիսի տեսակներից- ունայն, սին, անպէտք- հայ մեծանուն արձակագիր եւ թարգմանիչ (1878-1964), բուն անունով՝ Մովսէս Յարութիւնեան:
- Լուր, տեղեկութիւն- մի տեսակ թռչուն-թափ- թփած, սիռած:
- Ընդարմանալ, անզգայանալ- ռիսակալ, քէն պահող:
- Կրկնաձ ձայնաւոր- լուսադէմին, շատ կանուխ- ժխտական նախածանց:
- Քնելու տեղ- մուգ կարմիր:
- Գլխի ոսկրեղէն տուփը, որի մէջ պարունակում է ուղեղը՝ թելադրական սխալով- դեղնած, գոյնը նետած:
- Բոլորի նախամայրը- դերանուն է- ոսկերիչների փոքրիկ մուրճ:
- Ազոտի բացազանչութիւնը- որեւէ յատկութեամբ բոլորից անցնել:
- Մարմնի սիւնը- իզական անուն- խառն մակ:
- Դերանուն է- որեւէ երկրի խոշոր բաժանումներ, որոնք ստորաբաժանում են գաւառների- հարած, որ ձեռքի ափով հասցում է որեւէ մէկի դէմքին:
- Սնամէջ խալ- այն տեղը, որտեղ կենտրոնացւած են ռազմական պաշարները եւ ռազմական ուժերին սպասարկող յատուկ կառուցումները- ոչ շէն, անբնակ:
- Կարող, ընդունակ- պայտել- որովհետեւ, մինչեւ իսկ:
- Մտրակ- ցերեկայ ժամը 12-ը:
- Անզօր, թոյլ- սնամէջ լիք- յենարան- ժխտական նախածանց:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1								■							
2				■						■					
3				■							■				
4							■							■	
5			■										■		
6								■	■			■		■	
7						■	■								■
8				■			■							■	
9		■													
10			■						■			■		■	
11				■						■					
12	■				■				■						
13											■			■	
14								■							
15					■								■		

### Ուղղահայեաց

- Հայ մատենագիր, հեղինակը՝ «Պատմութիւն հայոց» հնագոյն երկի- վարակիչ եւ համաճարակ հիւանդութիւն:
- Պատերազմական նաւ- փայտի տափակ ու երկայն շերտ:
- Մարմնի մասը, սկսած կոնքից մինչեւ ծունկը- հաւի կտրճի վրայի երկճիտ՝ եղանածե ոսկորը, որով գրագ են գալիս- իզական անուն:
- Մի տեսակ միրգ- գետնի մէջ ծակ, ճեղքածք, որտեղից ջուր է բխում- երկու իրի իրար կցելու գործողութիւնը:
- Առանց ալիւրի, ալիւր չունեցող՝ թելադրական սխալով- կրճատած բառ, որ անզլեւնով գործ է ածում լաթիքինթոսի փոխարէն:
- Երկրի մակերեսի բնական բարձրութիւն- դերանուն է- անյազ, անկուշտ դառնալ:
- Տուն աւերող, տան համար շատ վնասակար- անհիմն երեսակայութիւն:
- Կտրիճ- հաստատուն՝ դիմացկուն դառնալ:
- Իզական անուն- նորից իզական անուն- ժողովրդական բարբառով «միւս» է նշանակում:
- Շորով՝ կտորով կազմած գիրք- արական անուն:
- Անաւարտ գահ- ազատութիւնից զրկւած, ձեռքակալած- դերանուն է:
- Հայոց արժարոյնը- ամէն օր, օր ըստ օրէ:
- Յայտնի փիլիսոփայ «Մարքս»-ի փոքր անունը- սակայն- «տպել» բացի հրամայականը՝ եզակի երկրորդ դէմքի համար:
- Մայրիկ (բարբառային)- կրկնաձ ձայնաւոր:
- Նուրբ զանազանութիւն միեւնոյն տեսակի իրերի մէջ- ատոմի մասնիկներից:

ԼՈՒԾԵՔ  
ԽԱՉԲԱՌ  
ՍՏԱՅԵ  
ՆԻԷՐ

Խաչբառ համար 18-ի  
լուծւած տարբերակը  
տեսնել՝ էջ 16-ում:

# Էջեր մարզաձեւերի պատմութիւնից

## Ծանրամարտի պատմութիւնը եւ հայ դիւցազները

19-րդ դարի վերջին Պետերբուրգում ապրում էր բժիշկ Վ. Ֆ. Կրաեսկին, Կշռաքարային սպորտի սիրահար, որն իր բնակարանում ստեղծել էր ատլետիկական գրասենեակ՝ այդ մարզաձեւի համար անհրաժեշտ բոլոր իրերով:



«Ծերուկ բժիշկը» իր մօտ էր հրաւիրում տեղացի եւ քաղաք ժամանած «հերկուլեսներին», փորձում նրանց ուժը եւ անսահման ուրախանում, երբ հիւրերի մեջ յայտնաբերում էր մէկին, որի հետ կարողանում էր մրցակցել:

Եւ ահա 1885 թականի օգոստոսի 22-ին, Միխայլովեան հրապարակի No 1 տանը տեղի է ունենում «Ատլետիկայի սիրահարների խմբակի» պաշտօնական բացումը: Այդ օրն էլ դարձաւ Ռուսաստանի ծանր ատլետիկական սպորտի ծննդեան օրը:

Հետագայում Կրաեսկուն անուանում էին «Ռուսական ատլետիկայի հայր», որի «ուժի արեւատանցից» դուրս եկան այնպիսի հռչակատըր ծանրորդներ, ինչպիսիք էին աշխարհի առաջին չեմպիոն Մերգէյ Ելիսեւը, «Ռուսական առիծ» Գեորգ Հակկենշմիդտը եւ շատ ուրիշներ:

Մինչեղբայրական շրջանի Ռուսաստանի ամենանըշանաւոր մարզիկը Մ. Ելիսեւն էր, որը 1902 թականին 35 համաշխարհային ռեկորդներից 10-ի հասցէատէրն էր:

ԽՄ դիւցազունների առաջին համաշխարհային ռեկորդը սահմանեց 1923 թականի մայիսին: Մ. Բոյնիցկին այդ օրը մէկ ձեռքով պոկելով ռեկորդային քաշը:

Ն. Շատով, Գ. Պոպով, Ժիժին, Մ. Կասեանիկ, Ե. Խոտիմսկի, Մ. Շիշով, Սերգօ Հանքարձումեան, Ռուբէն Մանուկեան, Ի. Ազարով. ահա համաշխարհային ռեկորդների հասցէատէրերի ոչ լրիւ ցուցակը, որոնք մինչ-պատերազմեան տարիներին արդէն կարող էին դառնալ իւրաքանչիւր պետութեան մարզական զարդը:

«Երկաթ խաչի» Խ. Մ. ասպետները առաջին անգամ համաշխարհային մրցահարթակ դուրս եկան 1946 թականին, Փարիզում, որտեղից տուն վերադարձան թիմային երկրորդ մրցանակը նաճած:

Մէկ տարի անց, 1947 թականի յուլիսին, Ֆինլանդիայի մայրաքաղաք էին հաւաքել Հոլանդիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի, Իրանի եւ Խորհրդային Միութեան 47 ուժեղագոյն ծանրորդներ: Դա Խորհրդային Միութեան դիւցազունների առաջին եւրոպական ստուգատեսն էր: Եւ միայն այն, որ սրանք Հելսինկի էին ժամանել երկու թիմով, արդէն խօսում էր նրանց բարձր արդիւնքների մասին:

Մայր ցամաքի առաջնութիւնը իրաւամբ դարձաւ Խորհրդային Միութեան ծանրամարտի յայտնութիւնը: Մեր բոլոր տասներկու գիւցազներն էլ բարձրացան պատույ պատանդան, իսկ վեց քաշային կարգերից հինգում է-

րոպայի չեմպիոններ դարձան երեսանցի Իւան Ազարովը, Լեւ Մեխանիկը, Նիկոլայ Շատովը, Գրիգորի Նովակը եւ Եակով Կուցենկօն: Դոնսկոյը, Լոպատինը, Պոպովը եւ Բոժկօն արժանացան արծաթէ, իսկ Կասեանիկը, Կաշաեւը եւ Լապուտինը՝ բրոնզէ մեդալների:

Թիմային հաշիւով սրանք 26 միաւորով գրաւեցին առաջին տեղը, իսկ երկրորդ տեղը գրաւած Շւեդիայի հաւաքականը հաւաքեց ընդամենը... 4 միաւոր:

Անցան տարիներ: «Երկաթ խաչի» Խորհրդային Միութեան ասպետների փառքը գնալով աւելի ու աւելի մեծացաւ 27 տարիների ընթացքում նրանք 18 անգամ նաճել են մայր ցամաքի 12 անգամ՝ աշխարհի առաջնութիւնների թիմային յաղթանակը:

Մեր դարաշրջանի Օլիմպոսի «աստածներին» ընտանիքում իրենց արժանաւոր տեղն են գրաւել Ռաֆայէլ Չմշկեանը, Իրի Վլասովը, Արկադի Վորոբեօւը, Լեոնիդ Ժարոտինսկին, Վիկտոր Կուրենցովը, Ալեքսէյ Կուրիմովը, Ռուդոլֆ ՊլիւկՖելդերը, Եան Տալսը, Վասիլի Ալեքսեւը եւ շատ ուրիշներ, որոնց հաշիւներում կան նաեւ աշխարհի չեմպիոնների ոսկէ դափնիներ:

Միջազգային մման խոշոր ստուգատեսներում բոլորից շատ յաղթանակներ են տարել Արկադի Վորոբեօւը՝ երկու օլիմպիադաներում եւ աշխարհի հինգ առաջնութիւններում, Իրի Վլասովը, Դաւիդ Ռիգերտը՝ մէկ օլիմպիական դափնի եւ աշխարհի հինգ առաջնութիւններ: Երոպայի, աշխարհի առաջնութիւնների եւ օլիմպիական խաղերի ինը ոսկէ եւ երկու արծաթէ պարգեւ ունէր վաստակատըր վարպետ Ռաֆայէլ Չմշկեանը...

Խորհրդային Միութեան ժողովուրդների վեցերորդ ըսպարտակիադայում «երկաթ խաչի» հայ ասպետները հաճելի անակնկալ մատուցեցին թէ մարզատէրներին եւ թէ այս մարզաձեւի գիտակներին, թիմային հաշիւներում գրաւելով հինգերորդ պատուաւոր տեղը:

Կիսամիջին քաշային կարգում, ռաւական երկամարտում երրորդ տեղը գրաւեց երկրի ռեկորդակիկը, «Բարեկամութիւն» գաւաթի միջազգային մրցաշարի յաղթող, միջազգային կարգի սպորտի վարպետ Վարդան Միլիտոսեանը: Երկամարտում բրոնզէ մեդալով պարտզեւաւորեց նաեւ առաջին ծանր քաշային, միջազգային կարգի սպորտի վարպետ Գազիկ Յարութիւնեանը:

Վիլնիւսեան մրգահարթակում լաւ հանդէս եկան նաեւ Համլետ Մովսիսեանը, Հրանտ Թորոսեանը, Հենրիկ Գրիգորեանը, Սերգէյ Ռոստոմեանը, Աշոտ Մելքոնեանը եւ Ռոբերտ Յովհաննիսեանը:

Սպարտակիադայի օրերին, հանդէս գալով Մարսելում անցկացւած ծանրամարտի աշխարհի երիտասարդական անդրանիկ առաջնութիւնում, միջազգային կարգի սպորտի վարպետի արդիւնքով պատույ պատանդանի առաջին աստիճանին կանգնեց Իրի Վարդանեանը...

Հետագայում հայազգի ծանրամարտի ասպետներ՝ Իրի Վարդանեանը, Իրի Սարգսեանը, Օզսէն Միլոզեանը եւ Աշոտ Դանիլեանը դարձան աշխարհի կրկնակի, եռակի եւ բազմակի չեմպիոններ: ■

# «Քարտեզը մարդկային մտքի մեծագույն գիւտն է»

Կամար Աւետիսեան

Որպէս վերնագիր վերցւած է ան-  
ւանի աշխարհագրագէտ Իւ. Մ. Շո-  
կալսկու խօսքերը: Չէ՞ որ քարտեզը թէ  
աշխարհագրութեան ուսուցման եւ թէ  
գործնական աշխատանքում անփո-  
խարհին է:



Քարտեզ բառը արաբական ծա-  
գում ունի, բայց մեզ է անցել յունարէնից: Հինքում ընկած  
է խարտի բառը, որը եւ ունի գրութիւն, նամակի իմաստ:  
Ինչպէս յայտնի է, արաբները քարտեզի զարգացման եւ  
տարածման գործում մեծ դեր խաղացին: Չէ՞ որ նրանք  
միջին դարերում ծովագնացութեան մէջ կարեւոր դեր էին  
խաղում եւ բնական է քարտեզի կարիքը պէտք է զգային:  
Արաբները իր ժամանակին միջնորդի դեր էին խաղում  
Արեւմուտքի ու Արեւելքի միջեւ եւ մեծ առեւտուր կատա-  
րում Հնդկական ովկիանոսի այն հատւածում, որը Արա-  
բական ծով է կոչւում:

Նախ այն մասին, թէ ինչ ենք հասկանում քարտեզ  
ասելով:

Աշխարհագրական քարտեզ է կոչւում որոշ կանոն-  
ների համաձայն երկրի թէ ամբողջ մակերեսի եւ թէ ա-  
ռանձին մասերի պայմանական, փոքրացրած պատկե-  
րացումը՝ հարթութեան վրայ:

Աշխարհի նման պատկերացման անհրաժեշտութիւնը  
մարդիկ զգացել են շատ վաղ ժամանակներից: Այսօր էլ  
Լոնդոնի թանգարանում պահուած է Բաբելոնի պեղումնե-  
րից դուրս բերած քարտեզ, սակայն նրա վրայ պատկեր-  
ւած է աւելի փոքր տարածութիւն, այն էլ քանդակւած աղ-  
իւսի վրայ:

Յետոյ սկսել են գծել մագաղաթի եւ աւելի ուշ՝ արդէն  
թղթի վրայ: Այսպիսով այսօրայ մեր սովորական քարտե-  
զը ունի բարակաւ երկար պատմութիւն:

Սի առիթով մենք ասել ենք, որ թէ դպրոցում, թէ տանը  
աշակերտը սովորաբար տեսնում է պատից կախւած  
կիսագնդիկ կամ երկրի առանձին մասերի քարտեզները:  
Այդ քարտեզները յաճախ տրուում են այնպիսի բազմե-  
րանգ գոյներով, որ նմանում են գունագեղ գորգերի:  
Բայց քարտեզը նման է գորգի ոչ միայն արտաքինապէս,  
այլեւ նրանով, որ նա էլ գորգի նման հիւսել է աս-  
տիճանաբար, իրայատուկ եւ տարբեր «թելերով»:

Ներկայումս օգտագործուող քարտեզները տպւում են  
ժամանակակից կատարելագործւած մեքենաներով եւ  
շատ են տարբերում անցեալի քարտեզներից: Գոյութիւն  
ունեն յատուկ Ֆաբրիկաներ, որտեղ տպւում են յատկա-  
պէս, գունատր եւ գեղեցիկ քարտեզներ, առլասներ:  
Քարտեզը միշտ էլ մարդուն օգնել է ճանաչելու իր շրջա-  
պատը, իր հայրենիքը, նրան կից երկրները եւ վերջապէս  
աշխարհը:

Ինչպէս տեսնում ենք, դեռ վաղ ժամանակներից մար-  
դիկ քարտեզներ են գծել պատկերելով իրենց մօտիկ ու  
հեռուոր շրջապատը: Այդ քարտեզների վրայ նրանք նշել  
են իրենց յայտնի ցամաքային եւ ջրային տարածութիւն-

ները, ինչպէս նաեւ գետերը, լեռները, բնակավայրերը,  
այն ամէնը ինչի մասին իմացել են:

Քարտեզի նշանակութիւնը եւ անհրաժեշտութիւնը մեծ  
է մանաւանդ աշխարհագրութեան եւ պատմութեան դա-  
սերին:

Ինչպէս ասում են, աշխարհագրութիւնը քարտեզով է  
սկսւում, քարտեզով էլ վերջանում: Աշխարհագրագէտ Ն.  
Ն. Բարանսկու պատկերաւոր արտայայտութեամբ քար-  
տեզը աշխարհագրութեան ալֆան եւ օմեգան<sup>1</sup> է:

Այս ձեւակերպումը ինքնին շատ բան է ասում քար-  
տեզի եւ աշխարհագրութեան փոխազդեցութեան մասին:  
Իրականում ամէն մի աշխարհագրական ուսումնասիրու-  
թիւն, եթէ նա իրօք այդպիսին է, կապւած է քարտեզի հետ:

Քարտեզի մեծագույն առաւելութիւններից մէկը տպա-  
ւորութեան միաժամանակութիւնն է: Նայելով քարտեզին  
մարդ անմիջապէս ընդգրկւում է այն, ինչ տեքստը տալիս է  
յաջորդականութեամբ:

Մարդու կողմից երկրի ուսումնասիրման, իրացման եւ  
վերափոխման բոլոր էտապներում քարտեզը եղել եւ մը-  
նում է անփոխարինելի օժանդակ պիտոյք:

Ահա թէ ինչու քարտեզի եւ աշխարհագրութեան կապը  
այդքան շատ է ընդգծւում: Գիշտ է ասւած, որ աշխար-  
հագրութեան դասին քարտեզը անհրաժեշտ է այնքան,  
որքան նոտաները՝ երաժշտութեան դասին: Շատ ժամա-  
նակ մարդիկ կարծում են, թէ քարտեզը դիտողական  
առարկայ է, ինչպէս նկարը, պլակատը, բայց դր հիշտ չէ:

Քարտեզը աշխարհագրութեան դասը իրացնելու  
համար գրքի նման ինքնուրոյն աղբիւր է:

Քարտեզի ընթերցում չի նշանակւում, թէ պէտք է կար-  
դան անւանումները եւ կարողանան տեսնել այս անւա-  
նումների եւ կոնկրետ տեղերը, այլ կարողանան մտովի  
կենդանացնել այն բովանդակութիւնը, որը յատուկ է  
տւեալ տեղին: Քարտեզով ճամփորդելը գրաւիչ է ուսա-  
նելի զբաղմունք է: Եթէ ծանօթ ես նրա բոլոր նշանակու-  
նեքին, ուրեմն լաւ կը հասկանաս: Չէ՞ որ քարտեզը մեզ  
ցոյց է տալիս ոչ միայն երկրի պատկերը իր պայմանա-  
կան նշաններով ու պետութիւնների, քաղաքների անու-  
ններով, այլեւ գոյներով, դրանց խտութեամբ, որոնք մեզ  
շատ բան են պատմում այն տեղերի մասին, ուր մենք  
մտովի տեղափոխուում ենք:

Ընթերցել քարտեզը նշանակւում է՝ հասկանալ այնտեղ  
պատկերւած տեղերը, հասկանալ տեղանքը այն պայմա-  
նական նշանների օգնութեամբ, որոնք տրւած են:

Քարտեզի ընթերցման համար հարկաւոր է գիտենալ մի  
քանի հիմնական տեսլներ, որոնք կազմում են այս-պէս կոչւած  
քարտեզի այբուբենը: Դրանք են՝ մասշտաբը,  
աստիճանագանցը, պայմանական նշանները, ինչպէս նաեւ  
բարձրութիւնների եւ ցածրութիւնների պատկերումը եւ այլն: Դա  
նոյնն է, ինչպէս ասենք դպրոցում աշակերտը սովորում է  
տառերը, այսինքն գիրք կարդալ ու բառերը հասկանալ: Այսպէս  
է նաեւ քարտեզը, որը կարդալուց բացի, պէտք է հասկանալ:  
Դրա համար էլ հարկաւոր են նաեւ աշխարհագրական  
համապատասխան գիտելիք-ներ, որոնք նոյնպէս ձեռք են  
բերում աշխարհագրութեան դասին: ■

Ճար. 1

<sup>1</sup> Յունական այբուբենի առաջին եւ վերջին տառերը:  
Գործածւում է որեւէ քանի սկզբի ու վերջի իմաստով: Այսին-  
քը՝ ամբողջութեամբ, լիակատար: Ասենք, քարտեզը հա-  
մարում է աշխարհագրութեան սկիզբն ու վերջը, իհարկէ,  
բովանդակութեան (տեքստի) հետ վերցրած: